Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 5 ռուբլի.
Արտասահման հատորները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Բոլոր տեղերում գտնվում են խմբագրատներ.
Մեզ հասցէ՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱՓԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների հաժար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ
4 ՌՈՒԲԼԻ
12 ամս.՝ 10 ռ., 6 և 7 ամս. 6 ռ. ամսակ. 1 ռ.
Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թուրքիա՝ 120 ղրուշ։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կաբելի է և նամակադրոշմով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. Լ երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով՝ Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՒՈՒԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԴԱՇՆԱԿԱՀԱՐ
ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ
Ելիզավէտինսկայա, № 40.
(օ. մ.) առ. 985. 20—7

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ

III

Կովկասցին իրան համարում է կուլտուրական տարր։ Եւ այդպէս էլ է նա։ Դարերի ընթացքում նա ժառանգել է կուլտուրական սովորութիւններ և հմտութիւններ, որոնցով նա առաջ է տանում իր կեանքը։

Բայց նրա ժառանգած հմտութիւններ, որքան էլ նրանք նշանակալից լինեն մեր երկրի կուլտուրական պատմութեան համար, այնու ամենայնիւ ներկայի համար անբաւարար են մեծ մասամբ և յաճախ շատ անբաւարար։

Համաշխարհային կուլտուրական կեանքը արագ առաջ է գնում, իսկ մենք յետ ենք մնում նրանից։ Եթէ, օրինակ, մի հարիւր տարի սրանից առաջ կովկասեան մշդրերը կարող էին առաջնակարգ տեղերից մէկը գրաւել համեմատութեան ժամանակ, այժմ նրանք արդէն ամենևին այդպիսի յաւակնութիւն ունենալ չեն կարող։

Եւրոպական և ամերիկական երկրագործները այս հարիւր տարվայ ընթացքում հսկայական, խոշոր առաջադիմութիւններ և կատարելագործութիւններ արին, իսկ մեր երկրագործը կամ բոլորովին չը շարժվեց իր տեղից, կամ շատ փոքր առաջադիմութիւն արեց, իսկ մի քանի շրջաններում նոյն իսկ յետադիմութեան նշաններ ցոյց տուեց։

Եթէ հին դարերում կրիայի քայլերով առաջ գնալով աշղովում էր երկար տարիների ընթացքում իւրացնել այս ու այն առաջադիմութիւնը և հմտութիւնը և եթէ հազարաւոր տարիներ ապրելուց յետոյ կովկասցին ունի մի քանի կուլտուրական բարեփոխութիւններ, այժմ այլ ևս անկարելի է նոյն դանդաղ ընթացքով դիրք պահպանել գոյութեան կռիւ մէջ և մրցութեան դիմանալ ուրիշ երկիրների հետ։

Այժմ պէտք է արագ շարժվել, արագ իւրացնել բարեւորումներ և կատարելագործութիւններ, մշտական եռանդ ցոյց տալ կուլտուրական առաջադիմութեան մէջ։

Ի հարկէ բարեփոխութիւններ մրցում են մեր կովկասեան ազգաբնակութեան կեանքի մէջ, բայց համեմատաբար շատ դանդաղ և թերի կերպով։ Իսկ դանդաղութիւնը ներկայ ժամանակներում յաճախ հաւանիշ է անգործութեան, որովհետև մրցութեան ժամանակ յաղթող տարրը գրաւում է ուժեղ, արտօնեալ դիրք և գժուարացնում թոյլերի և յետամնացների գործը աւելի ևս մեծ չափով։

Հայ մարդը շատ սիրում է իրան առաջնակարգ կուլտուրական տարր հռչակելու մեր երկրում. բայց իրական կեանքը շատ դէպքերում ցոյց է տալիս, որ դժբաղդաբար հայ տարրը ամենևին այդ հռչակին արժանի չէ։

Կան մի շարք կուլտուրաներ և արհեստներ, որոնց մէջ իմերելը, լեզգին, թուրքը, օսը աւելի առաջադիմութիւններ են արել, քան հայը։

Օրինակներ կարելի էր թուել բաւականաչափ։

Անշուշտ, ժամանակի ընթացքում հայը կընդունի շատ բարեփոխութիւններ, բայց անհրաժեշտ է, որ նա ցոյց տայ աւելի եռանդ, աւելի գիտակցական վերաբերմունք, քան մինչև այժմ տեսնում ենք։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 4 սեպտեմբերի

Կայսրը հրամայել բարեհաճեց ներքին գործերի մինիստրութեան ներքոյ յատկացնել 10,000 ռուբլի՝ տալու Թագուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնայի և Կայսրի կողմից Յարեցեւի հրկիզեալներին։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 5 սեպտեմբերի

Պալատի մինիստրի հեռագիրը Համբուրգից. «Այսօր Կայսրը Օգոստափառ Աղջիկներով ուղղափառ եկեղեցում լսեց պալատական հոգևորականութեան մատուցած պատարագը։ Այստեղ էին նաև շքախմբի անդամները, որոնք ուղեկցում են Նոցին Մեծութիւններին»։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 4 սեպտեմբերի

Դեսպան Նելիդովը վախճանվեց ժամը 12 և 40 րոպէին։ (Հ.Գ.)

—

Պարիզ, 5 սեպտեմբերի

Տիկին Նելիդովան ստացաւ բազմաթիւ ցաւակցական հեռագիրներ։ Նախագահ Ֆալիէրը հեռագրով չափազանց զգացված խօսքերով ցաւակցութիւն յայտնեց տիկնոջը։

Առաւօտեան նախագահի ներկայացուցիչը գնաց դեսպանատուն ցաւակցութիւն յայտնելու նախագահի անունից խորհրդական Նելիդովին և դեսպանի ընտանիքին։ Բրիանը նոյնպէս յանձնարարեց ցաւակցութիւն յայտնել։ Բոլոր մինիստրները ստորագրեցին իրանց ազգանունները դեսպանատանը։ Պիշոնը ուղարկեց ցաւակցական հեռագիր և հեռագրով յանձնարարեց Պետերբուրգում պաշտօնավարող Ֆրանսիայի հաւատարմատարին յայտնել ցաւակցութիւն և խորին վիշտ դեսպանի մահվան առիթով ռուսական կառավարութեանը ֆրանսիական կառավարութեան կողմից։ Պիշոնը վաղը կը լինի Պարիզում։

Դեսպանի թաղումը կը կայանայ չորեքշաբթի օրը ռուսական եկեղեցու դամբարանում։

«Ժուրնալ-դէ-Դէբա» և «Լիբերտէ» լրագիրները ասում են, որ Նելիդովի մահով Ֆրանսիան զրկվեց հաւատարիմ բարեկամից, Ռուսաստանը՝ փայլուն դիպլոմատից։ (Հ. Գ.)

—

Մոսկվա, 4 սեպտեմբերի

Համալսարանում, իրաւաբանական աուդիտորիայի ամֆիթատրոնների տակ գտնվեցին 2 ռումբ, 1200 փամփուշտ, անծուխ վառոդ, անլէգալ գրուածք։ Ըստ երևոյթին. գտնված իրերը վերաբերում են 1905 թ-ին։ Խուզարկութիւն կատարվեց իրաւաբան-ուսանողների հանրակացարանում։ (Հ. Գ.)

—

Բաքու, 5 սեպտեմբերի

Լէնքօրանի գաւառի ոստիկանական պահակների և պարսիկ աւազակների միջև տեղի ունեցած հրացանաձգութեան ժամանակ վիրաւորվել են 2 աւազակ և Եշակչինի սահմանապահ զօրքի հրամանատար Դիակօնովը։ Յետոյ են խլվել Լէնքօրանի գաւառում յափշտակված գոմէշները։ (Հ. Գ.)

—

Օդեսսա, 4 սեպտեմբերի

Գործադող բեռնակիրները աշխատանքները վերսկսեցին հարաւ-արևմտեան երկաթուղիների վարչութեան առաջարկած պայմաններով։ (Հ. Գ.)

—

Սուխում, 4 սեպտեմբերի

Բաթումից եկաւ արդարադատութեան մինիստրը։ (Հ. Գ.)

—

Ցարիցին, 4 սեպտեմբերի

Նահանգապետի մասնակցութեամբ տեղի ունեցաւ բարեգործական կոմիտէի արտակարգ նիստը, որ անհրաժեշտ համարվեց ներքին գործերի մինիստրի թոյլտուութեամբ բանալ համառուսական հանգանակութիւն։ Թոյլատրված է կազմել վիճակախաղեր և բարեգործական ներկայացումներ։ Կարմիր Խաչի ընկերութեան առաջ միջնորդութիւն յարուցվեց ուղարկել 10,000 ռուբլի։ (Հ. Գ.)

—

Ամստերդամ, 4 սեպտեմբերի

Բելգիական թագաւորական զոյգը մեկնեց Բրիւսէլ։ (Հ. Գ.)

—

Աթէնք, 4 սեպտեմբերի

Ազգային ժողովի նիստի բացումից յետոյ առաջարկութիւն եղաւ երդում տալ ժողովի անդամներին։ Առաջարկութիւնը եռանդուն բողոքի հանդիպեց անդամներից մի մասի կողմից։ Տեղի ունեցան աղմկալի միջադէպեր։ Դրագումիսին հազիւ աջողվեց վերականգնել կարգը։ Երդման հարցը յետաձգվեց։ Յետոյ ձեռնարկվեց ժողովի լիազօրութիւնների հարցի քննութեան։ Դիմիտրակոպուլոսը նախագահուշացրեց հեռու ծալ անցանկալի անակնկալներից և պնդեց, թէ անհրաժեշտ է ձեռք բերել սահմանադիր ժողով լայն իրաւունքներով։

Դրագումիսը յայտնեց, որ եթէ ժողովը պնդում է ազգային ժողովը սահմանադիր ճանաչելու առաջարկութեանը, այն ժամանակ կաբինէտը հրաժարական կը տայ։

Նիստը փակվեց երեկոյեան։ (Հ. Գ.)

—

Բուդապէշտ, 4 սեպտեմբերի

Վիլհելմ կայսրը եկաւ Ֆրիդրիխ արքիդուքսի ամրոցը որսի՝ Մօգաչի մօտերը։ (Հ. Գ.)

—

Սէն-Նազէր, 4 սեպտեմբերի

Ֆալիէրը դիտեց այստեղի նաւաշինարաններում կառուցվող երեք զրահանաւերը, այցելեց արհեստանոցները։ Երեկոյեան Ֆալիէրը «Սէն-Լուի» զրահանաւի վրա ճաշ տուեց կառավարական հաստատութիւնների ներկայացուցիչներին։ (Հ. Գ.)

—

Պէկին, 4 սեպտեմբերի

Այսօր գալու է ամերիկական զինուորական մինիստր Դիկէնսօնը ընտանիքով և շքախմբով։ Նախատեսվում են շքեղ ընդունելութիւն, ունկնդրութիւն պետական խնամակալի մօտ, զանազան հանդէսներ։ Դիկէնսօնը վերադառնալու է Սիբիրի և Եւրոպայի վրայով։ (Հ. Գ.)

—

Պէկին, 5 սեպտեմբերի

Մանջուրական և Խու-Զուանի փոխարքաները զեկուցում ներկայացրին, որի մէջ նրանք շեշտում են մի միլիարդ դոլլար արտաքին փոխառութիւն կնքելու մասին՝ արդիւնաբերութիւնը զարգացնելու նպատակով երկաթուղիներ կառուցանելու համար։ Իբրև երաշխաւորութիւն նախագծվում է առաջարկել գոյութիւն ունեցող երկաթուղիները։

Այրեցած թագուհու կուսակցութեան հակառակութեան պատճառով, Իւանշիկային վերստին ակտիվ գործունէութեան կոչելու ջանքերը լիակատար պարտութիւն կրեցին։ (Հ. Գ.)

—

Բօրդօ, 5 սեպտեմբերի

Ֆալիէրը առաւօտեան ներկայ եղաւ ֆրանսիական նաւատորմի վարժութիւններին։

Քաղաքային վարչութեան տուած խնճոյքին Ֆալիէրը ուրախութիւն յայտնելով, որ ներկայ եղաւ Բօրդօյում օդագնացութեան վերջնական մրցութիւններին, ասաց.

«Օդին տիրանալը խոշոր տիրապետութիւն է, որի համարձակութիւնը առանձնապէս համապատասխանում է մեր հանճարի անզուսպ թռիչքին։

«Ես եկայ, որպէսզի բաժանեմ հարստութեան ընդհանուր զգացմունքները և վերստին ջերմ շնորհաւորանքներ ուղղեմ օդագնացութեան անվախ ներկայացուցիչներին, որոնց սառնասրտութիւնն ու քաջարիութիւնը անցան բոլոր սպասելիքներից և հիմք են տալիս ամենահամարձակ յոյսեր ունենալու։» (Հ. Գ.)

—

Վիէննա, 5 սեպտեմբերի

«Պոլ. Կօր.»-ը հաստատում է այն տեղեկութիւնը, որ Էրենտալը սեպտեմբերի վերջերին գնալու է Իտալիա փոխ-այցելութիւն գործելու Սան-Ջուլիանոյին։ Նոր տոմարով՝ հոկտ. 1-ին Էրենտալը կընդունվի իտալական թագաւորից Բակոնիջում և կը յանձնէ Ֆրանց-Յովսէփ կայսրի սեփական նամակը։

Մինիստրների տեսակցութիւնը տեղի կունենայ Տուրինում սեպտ. 30-ին։ (Հ. Գ.)

—

Լիսսաբոն, 5 սեպտեմբերի

Թագաւորը հրովարտակով նշանակեց 16 պէրերի։ Բոլորն էլ մինիստրութեան համախոհներից են։ Թագաւորը ամիսներ շնորհեց մամուլի գործերով բոլոր դատապարտվածներին։ (Հ. Գ.)

—

Սոֆիա, 5 սեպտեմբերի

Ֆերդինանդ թագաւորը վերադարձաւ Սլիվէնից, ուր երէկ մեկնեց զօրախաղերին մասնակցող զօրքերին դիտելու համար։ (Հ. Գ.)

—

Գուրնէյ-Ան-Բրէյ, 5 սեպտեմբերի

Զինուորական մինիստրը՝ օտարազգի օֆիցէրների պատուին տուած նախաճաշին՝ բաժակաճառով գոհունակութիւն յայտնեց ռուսական պատուիրակութեան ներկայ գտնվելու առիթով։ Գեներալ Գէրնգրոսը շնորհակալութիւն յայտնեց, մասնաւորելով օդագնացների համարձակութեան, զօրքերի տոկունութեան և արիութեան վրա, խմեց զինուորական մինիստրի և պանծալի Ֆրանսիական զօրքի կենացը։ (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ուրֆա, 4 սեպտեմբերի

Պարսիկ աւազակները կողոպտել և հրդեհել են քիւրդական աւազակների նախկին թագաստեղի Կոսոլան, Զալինդար և Հեաջին գիւղերը, որոնք վաղուց ընկել էին Թիւրքերի ազդեցութեան տակ։ Ազգաբնակութիւնը փախաւ։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 5 սեպտեմբերի

Հասարակական աշխատանքների մինիստրը յայտնեց հայկական «Ազատամարտ» լրագրի խմբագրութեան, որ Սամսօն-Սըվազ երկաթուղագծի կառուցումը 400 կիլոմետր տարածութեամբ, որը Թիւրքիայի համար ահագին ռազմական ու տնտեսական նշանակութիւն ունի, կը կատարէ կառավարութիւնը։ Դիծն անցնելու է Սամսօն-Թոկաթ-Սիլէ-Սըվազ։ Սամսօնի և Կօվդայի միջև նախնական աշխատանքներն աւարտված են։ Այս մասի կառուցումը կը սկսվի նոյեմբերին։ Ամբողջ գիծը կաւարտվի հաւանօրէն 4 տարում։ (Հ. Գ.)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պոլիս, 27 օգոստոս

Բացուած մենամարտը կը շարունակուի Բ. Դրան և Ֆէնէրի յոյն պատրիարքարանի մէջտեղ։ Մեր թերթերը, իբրև լոկ հանդիսատեսներ, օրը-օրին կընդօրինակեն թիւրք մամուլին հրատարակութիւնները։

Մենամարտին մէջ, ինչպէս ասկէ առաջ գրած եմ, ամենէ աւելի ցաւալին սա է, որ պատրիարքարանը, իր թակրիրներուն և ընտրած յայտարարութեանցը մէջ, կասկած կուտայ իր՝ հին ըէժիմի ջատագովութեանը մասին։

«Ենի գազէթա», այդ կէտին ակնարկելով, կըսէ. «Բռնակալ միապետին՝ Թիւրքիոյ մէջ այլևայլ տարբերու նկատմամբ բարւոք կառավարութիւն մը գործ դնել հաստատելու պատրաստ եղող պատրիարքի մը հոգեկան կացութիւնը, խղճահարութիւնը թող վերլուծուի։ Մէյ մը ալ խնդիրը մեր հայ հայրենակիցներուն հարցնենք և խորհինք, թէ այդպիսի խօսք մը այսօր, յոյն ազգին իրական շահերը մտածող մարդու մը, թէ Աբդիւլ-Համիդի շնորհակալութի մը բերնէն կրնայ ելնել։»

«Օսմանիշէր լոյդ» կը գրէր նոյն իմաստով. «Այդ ճառը բացարձակ կերպով երևան կը բերէ այն ընդդիմութիւնը, որ յայտնուած է յոյն տարրին և ժէօն-Թիւրքերու մէջտեղ։ Այդ ճառը լոկ ներբողական մը չէ գտնվեր սուլթանին, «որ, ըստ Յովակիմ պատրիարքի, կամեցողութիւնը ունէր արդարութեամբ կառավարելու կայսրութեան միւս տարրերը»։ Այդ դատումով, որու թելադիր եղած է դիմադրութեան կիրքը, օրթօդոքս եկեղեցիին պէտք—անձնապէս այնքան յարգելի—յատկանշական արտայայտութիւնն է այն դիրքին, որ յոյն-օրթօդոքս տարրը բռնած է նոր Թիւրքիոյ նկատմամբ։ Պատրիարքը ցաւի նայուածք մը կարձակէ դէպի ետ՝ միապետականութեան վրայ, որ, իբ ըսածի նայելով, ամենամեծ յարգանք ցոյց տուած է յոյն ազգի իրաւունքներուն՝ նկատելով զանի իբր մէկ կարևոր տարրը երկրին։

«Այդ հաստատութիւնը համաձայն է իրողութեանց ճշմարտութեանը։ Ինչպէս ըսած ենք ուրիշ յօդուածով մը, յոյն տարրը, ասկէ առաջ, առանձնաշնորհեալ դիրք մը կը գրաւէր։ Մինչդեռ Անատոլուի մէջ հազարաւոր հայեր կը խողխողուէին, կը ջարդուէին միապետութեան այնքան «արդար» կառավարութեան ձեռքով, օրթօդոքս եկեղեցին և նոյն ազգը, իրենց իսկապէս պահպանողական հանգամանքովը, Եըլդըզի բովանդակ շնորհները կը վայելէին։ Ուրեմն բնական է, որ այդ եկեղեցիին պետերը ցաւ զգային, տեսնելով որ բռնապետութիւնը կը տապալուէր և տեղի կուտար նոր դարաշրջանի մը։ Այդ ցաւերը ասկէ առաջ բացէ ի բաց չէին արտայայտուիր. ու եթէ այսօր ալ չեն պարկուիր ատոնք, ապացոյց է, թէ պատրիարքարանը վճռած է յայտնապէս պայքարիլ ներկայ ըէժիմի դէմ՝ առանց անշուշտ մտածելու այն հետևանքներու մասին, որ կրնայ ունենալ այդպիսի ուղղութիւն մը»։

Նոյն թերթը, միևնոյն թիւով, կը գրէ, թէ Ֆէնէրի պատրիարքարանը հետամուտ է գտնել կրօնական դաշնակիցներ կամ, աւելի ճիշդը, կրօնքի պատրուակի ներքև՝ քաղաքական պաշտպանութիւն։ Ու այդ ակնկալութեամբ, կըսուի, իր աչքը յառած է անգլիական եկեղեցիին։ Յոյն օրթօդոքս եկեղեցին բողոքական եկեղեցիի մը հետ համաձայնիլ, երևակայելի բան չէ ատ։ Առաւելն տեղի պէտք է տայ բողոքական եկեղեցիին, ու ատով անգլիական կառավարութիւնը պիտի միջամտէ եղեր ի նպաստ յունական եկեղեցիին։ Ուղղը թող հաւատայ։

Մնաց որ յոյն ժողովուրդը, և գուցէ հոգևորականութիւնն ալ միասին, այնքան ոգևորուած է իր եկեղեցիի ուղղափառութիւնով, որ երբէք չի տառակուսիր, թէ մերձեցման կէտեր պիտի գտնուին, և անգլիական եկեղեցին պիտի իյնայ օրթօդոքս եկեղեցիին ազդեցութեանը ներքև։ Եթէ իրողութիւնը հեռի է իրականութիւն դառնալէ, ոգևորութիւնը յոյներուն մեծ շահն է։

Դատական մինիստրի խորհրդականն յայտարարած է յոյն խմբագրի մը, թէ կառավարութիւնը, մասնաւոր շրջաբերականով, հրահանգ տուած է նահանգային իշխանութեանց՝ իր որոշումներու գործադրութեանը մասին։ Այսինքն թէ չպիտի թոյլ տայ, որ պատրիարքը ազգային ժողով գումարէ։ Ինչ որ ստոյգ է՝ սա է որ,—ըսած է,—յոյն պատրիարքը, իր ապօրինի ընթացքով, աւելի քան վանգաւոր կացութիւն մը ստեղծած է թէ իրեն և թէ կառավարութեան համար։

Այսպէս, ամեն առաւօտ, սիւնակներ կը լցուին այդ հարցի շուրջ, միևնոյն մտածումները քիչ մը ընդլայնուած, միևնոյն գործողութիւնները աւելի մանրամասնուած յոյն պատրիարքարանի մէջ։ Կերևի թէ, դժբաղդաբար, ալ կասկած չպիտի մնայ, թէ միապետական բռնակալութիւնը ալ աւելի

կշռաւոր համարուած է «տիեզերական» պատրիարքի աչքին. ինչ որ երբեմն կը քօղարկուէր, այսօր բացէ ի բաց կը յայտնուի։

Երբ սահմանադրութիւն հռչակուեցաւ, Ցէնէրի հոգևորական իշխանութիւնն և յոյն տարրը, առ հասարակ, երկրին մէջ ամեն տեղ տաք վերաբերութիւն ցոյց չտուաւ դէպի նոր պետական դրութիւնը։ Իսկոյն ըմբռնուեցաւ թէ հաւասարութիւնը, որ պիտի գար՝ ամեն տարրերու տալով գործելու, վայելելու դիւրութիւն, իբրև թէ անիրաւութիւն մը եղած ըլլար յոյն տարրին ու պատրիարքարանի։ Այն բացառիկ դիրքը, որ ունեցան յոյները երկրին մէջ ճնշուած տարրերու, բնաբարուած շահերու և իրաւունքներու վրայ, անոնց համար նկատուած է արդար իրաւունք մը։ Յոյն պատրիարքը, Համիդի առջև, ամեն տարի՝ դրամի և ուրիշ առանձնաշնորհութիւններու միջոցներ ձեռք բերած ատեն, օր մը օրանց երբէք մտքէն չանցուց, թէ ուրիշ քրիստոնեայ տարր մը, արիւնի և աղէտքի մէջ, ազատ շնչառութիւն ալ չունի։ Պետական դպրոցներ կռնակի վրայ բաց էին իրենցներու առջև, պետական պաշտօններ, դրամատուներ, այդ բոլորն իրենցներու համար, մինչդեռ անդին հալածանքի ներքև էր հայ ուսանողը, հայ պաշտօնատարը, հայ վաճառականը, խանութպանը. դատարաններու մէջ օրինագիրքը ոչ մէկ յանցանք ունէր յոյներու մասին, իսկ հայերու ու, հեռագիրներ, թիւրք մտաւորականութեան համար՝ ոչ մէկ արդարացնող փաստ։ Ահաւասիկ դիրքեր, ուր ըղձալի նայուածքով կը դառնայ յոյն պատրիարքարանը։

Յոյն տարրն ու պատրիարքարանը պէտք է ըմբռնած ըլլային, թէ ան՝ ինչ որ եղաւ՝ առժամանակեայ արտուղութիւն մըն էր։ Ու այսօր ինչ արգելք կայ որ, երկրին բոլոր տարրերուն հետ, հաւասար գծի վրայ չյառաջադիմեն։ Օժտուած տարր մըն է յոյնը, արթուն, ճկուն, ճարպիկ. ոչ մէկէն ետ կը մնայ, մանաւանդ որ նախորդ դրութիւնը, 15—20 տարիներու շրջանի մէջ, իրեն տուաւ դիրքի, գրամի, խաղաղ զարգացումի, թուական աճելութեան առաւելութիւններ։ Ու այսօր ալ, երբ մենք տակաւին ստիպուած ենք աշխատիլ մեր վէրքերու, քանդումներու, աղէտքներու դարմանումին, իրենք յոյները պիտի շարունակեն իրենց յաղթական քայլերը դէպի առաջ։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԾԵՐ, ՆԵՐԿԵՐ

LIX

Իմ ընթերցողներս երևի դժգոհ են ինձանից։

Ասում կը լինեն՝ սև ակնոցը քաշ է արել քթիցը և ամեն ինչ սև է տեսնում։

Եւ իրաւ՝ յոռետես մարդը միշտ ամեն ինչ յոռի՝ ծուռ է տեսնում։

Դիր դիմացը մի նոր չորս-ոտանի սեղան, անպատճառ մի ոտը աչքին կոտրած կեռևայ և նոյնիսկ ճիգ կանի աճապարանօք բռնելու, որ սեղանը չընկնի։

Դա էլ, ի հարկէ, գժի մի տեսակն է։

Ասում են, թէ 72 տեսակ գիժ կայ։

Կայ և խելօքների 72 տեսակը։

Սրանք ամեն ինչ լաւ գոյնի են տեսնում՝ լաւատես են։

Դիր առջը մի չոր քար՝ վարդ կերևակայի, կռռացրու ագռաւի նման՝ սոխակի ձայն կը լսի։

Ես, ի հարկէ, ոչ կը ցանկայի լինել այդ 72 տեսակ գժերից և ոչ այդ 72 տեսակ խելօքներից մէկը։

Ասուած նրանց հետ, թող գիժը իր գժութիւնը անէ և խելօքը իր խելօքութիւնը. բայց երբեմն գիժ լինել և երբեմն խելօք՝ դա ճաշակաւոր չէ, նոյնիսկ օգտաբեր է։

Այն ժամանակ դուք կունենաք մի հայելի, որտեղ կը տեսնէք գժի գժութիւնները և խելօքի խելօքութիւնները։

Թէկը, առողջ դատողութիւն և միտք (мысль)—ահա ինչը մեզ ամենքիս պակասում է։

Պէտք է սովորել մտածել (мыслить)։

Առողջ դատողութիւնը, մտածելով առաջ գնալը՝ ամենից առաջ։

Առողջ միտքը՝ դա պիտի լինի մեր աւանդարդը, որով գնալու ենք մաքառելու կեանքի հետ։

Կեանքը յիմար չէ, յիմար ենք մենք, և նա միշտ սիրում է վառել, գրգռել, քերտվայնել, որ գայ և՝ թրմիկ՝ խփի ձեր ճակատին։

Կուլտուրական, խելօք ազգերի մէջ վաղուց մոռացած է այն թէօրիան, որ կեանքի դէմ հարկաւոր է գնալ ջղերով, կրքով։ Կիրքը, ջղերը՝ դա թրջված, լպրծուն սապօն է, որ ընկնում է ձեր ոտների տակը։ Եւ այդ արհեստը յատուկ է վայրենի, անկուլտուր ազգերին։

LX

Դուք միամիտ, խաղաղ հոգով գնում էք, մէկ էլ տեսաք՝ մի բուշմէն եկաւ և գաղտագողի մի լպրծուն սապօն կամացուկ դրեց ձեր ոտների տակը։

Սկսվեցիք և՝ թրմիք՝ ընկաք գետին։

Վէր էք կենում և ինչ էք տեսնում. ձեր դաւադիրը ձեր բարեկամն է։

— Ինչ ես անում, անիրաւ. ախր դու իմ բարեկամն ես։

Բարեկամը հոհոալով ծիծաղում է և ասում.

— Ուզում էի առաջ անցնել, խանգարում էիր. թրխկացրի, որ անցնեմ։

Եւ թրխկացնում են, անօրինակ թրխկացնում են իրար։

Մի նայեցէք ձեր շուրջը։

Ո՞րքան բուշմէններով էք դուք շրջապատված։

LXI

Եւ դրա համար է, որ մեր գործը առաջ չէ գնում, մենք յետ ենք մնում։

Զուտենք ոչինչ. մի լաւ բան սաղմում խեղդվում, մեռնում է։

Բուշմէնութիւնը մեր գործելակերպն է և բուշմէնները թրխկացնում են, որ առաջ գնան։

Ժամանակ է, կարծում եմ, դիմակազրկել այդ բուշմէնութիւն և բանալ մերկ, բնական մեր իրականութեան, մարմնի գեղեցկութիւնը։

Եւ նրանք, որոնք այնքան ամաչկոտ և բարոյական են, կարող են voile ծածկել երեսներին կամ հայ բօշայի հիւսած մազէ մաղը։

Ճշմարտութիւն՝ նա դառն է, բայց և կենարար։

Աւելի լաւ է հազար թշնամի ունենալ ձեր երեսին ճշմարտութիւններ ասող, քան հազար բարեկամ՝ ձեր «հրաշալի» աչքերը գովող։

Բայց մենք խուսափում ենք ճշմարտութիւնից, անկեղծութիւնից։

Ատում, հալածում ենք նրան, ով մեր ագռաւի կռուցը չի նմանեցնի Ապօլլօնի քթին։

Օ՜, մենք ամենքս Ապօլլօն ենք, և վայ թէ մէկը չը հիանայ, չը սիրահարվի մեզ վրա։

Մենք ինքներս էլ սիրահարված ենք մեզ վրա։

Խլեստակովի նման արքած՝ շարունակ կրկնում, ասում ենք.

— Курьеры, курьеры, курьеры... Семьдесятъ пять тысячъ курьеровъ.

Ցափշտակվում, տարվում ենք մեր Ապօլլօնի գեղեցկութեամբ, իսկ այնտեղ մնում է մեր արտը չը վարած, մեր հացը չեփած։

LXII

Ես սիրում եմ մերկացնել իրականութիւնը, ցոյց տալ մարդկանց Ապօլլօնի գեղեցկութիւնը հայելու մէջ, բայց վախենում եմ՝ վաղը նրանք դադարեն ինձ բարևելուց և բուշմէնի նման աչքերի տակից նայելով ոտիս տակը լպրծուն սապօն գնեն։

Ինչու չէ։

Ուզում է առաջ անցնել։

Բայց մանում և արդէն մեր կեանքը մի գիծ, համակրանքի արժանի գիծ։

Դա կրիտիկայից անվախութիւնն է, նոյն իսկ ուրախութիւնը։

Եւ սովորել են սկսում մարդիկ բաժանել մարդուն՝ նրա արդարութիւնից, ստեղծագործութիւնից, վարմունքից։

Ես կարող եմ սիրել, անչափ յարգել մէկին և ենթարկել ամենախիստ կրիտիկայի։

Եւ, հաւատացնում եմ ձեզ, ես ամենից շատ եմ սիրում նրան, ինչը գրաւում է իմ ուշադրութիւնն իր պակասութեամբ, բացասական կողմերով։

Սիրում եմ, անչափ սիրում եմ՝ ուզում եմ նրա կատարելագործութիւնը, նրա զգաստանալը, լաւանալը, առաջադիմելը։

Եւ այսօր պէտք է ուրախութեամբ նկատեմ, որ լպրծուն սապօնը դէն են շպրտում մարդիկ և բուշմէնի հայեացքները փոխելով, привѣтливый եւրօպացու ողջոյնով անցնում են ձեր մօտով։

Եւ ես ուրախութեամբ մեկնում եմ ձեռքս, խիզախ կամարով թօթվում շապաս նրանց առաջ, որոնց ես սիրել եմ, քննադատել եմ։

Զը վախենանք քննադատութիւնից։

Բայց և չանուանարկել, չը ստել։

Երբ դուք ասում էք՝ քար է նա և խողովակ էք մտցնում ականջին, որ խօսէք բուլբուլը,

Դրանով դուք ձեզ էք ծաղրում, անպատուում։

Սրբութեամբ մօտենալ մարդկանց, երևոյթներին, թրխկացնել ճակատին նրա Ապօլլօնի քթիը, երբ տակից ցցվում է ագռաւի կռուցը.

Բայց և լինել ուղղամիտ.

Աչք ունենալ տեսնելու և՛ ագռաւին, և՛ Ապօլլօնին։

Ապօլլօն։

Ահա որի եռեից կուզենայի երթալ։

Ապօլլօն։ Յակովբ Դենչեան

ԵՐԿՈՒ ՕՐ ԱՆԻՈՒՄ

(Այցելուի թուղթի տպաւորութիւններից)

Բ.*)

Օգոստոսեան մի գեղեցիկ օր երկաթուղու սլացող գնացքը մեզ, մի քանի ուսուցիչ էկսկուրսանտներիս, հասցնում է «Անի» կոչվող կայարանը։

Առաւօտեան ժամը վեցն է։ Արշալոյսը նոր է սկսում բացվել։ Քնաթաթախ շտապում ենք վայր իջնել գնացքից։

Դողացնելու չափ ցուրտ ենք զգում։

Առանց մի բօպէ կորցնելու ոտով ճանապարհ ենք ընկնում դէպի մեր ուսումնասիրութեան վայրը, պատմական աւերակները։

Շիրակի առողջարար կլիման ազդում է մեր տրամադրութեան վրա։

Ճանապարհի կիսին, հեռու հօրիզօնի վրա, գլուխը հպարտ բռնած, երևում է ձիւնապատ Արարատը, այդ հսկայ պատմական լեռը, որը անթիւ դարերի ընթացքում լուռ վկայ է եղել մարդկային սերունդի անողոք ճակատագրին։

Տեսարանը հրաշալի է։

Երկու ժամ չանցած հասնում ենք «Մարկօվ» կոչվող հայաբնակ խրճուկ գիւղը։

Անին իր բոլոր աւերակներով երկին բացվում է մեր առաջ։

Փոխվում է մեր ուրախ ու անհոգ տրամադրութիւնը։ Նահատակ մեռցվածները, իրանց անցեալի ինքնուրոյն փառաւոր կեանքով, ստիպում են մեզ գոնէ մի քանի բօպէ խորասուզվել մարդու հասարակական կեանքի բարդ փիլիսօփայութեան մէջ, փորձելու գտնել այն անլուծելի պրօբլեմները, որոնք երկար դարերի ընթացքում կօշմարի նման շնչասպառ են արել մարդկային կենսունակ ոյժերին։

Բանական մարդ արարածը, գոյութեան անխուսափելի կռուում, զինված՝ ոչնչացնող բարբարոսական հակումներով և գայլի ինստինկտներով, անխնայ յօշոտել է իր նման թոյլ, անզէն արարածներին։ Այդպիսով մարդ-գազանների անզուսպ կրքերին զոհ են գնացել մի ժողովրդի բազմաձեայ անդադրում աշխատանքի և ստեղծագործութեան հրաշալիքները։ Հանգել է կուլտուրապէս բարձր մի ազգի հասարակական կեանքը։

Այդ ծանր, սիրտ ճմլող խորհրդածութիւններով ու անծայր զգացմունքներով տարված՝ աննկատելի կերպով անցնում ենք գիւղի ծուռ ու մուռ փողոցներով, իջնում ենք ձորը։ Վանեցի նաւավարը թիակի մի քանի աջող շարժումով մեզ հասցնում է Ախուրեանի միւս ափը։ Մի քանի բօպէից յետոյ կանգնում ենք «Սմբատեան» հսկայ պալիսպների առաջ։ Մայրաքաղաքի անյաղթ բեկորները չը նայած սելջուկների, թաթարների խուժանների և այլ թշնամիների բազմաթիւ հարուածներից պարտված՝ խոնարհեցրել են իրանց հպարտ կատարները, բայց և այնպէս զարձեալ անուրկ դիրքով և խրոխտ տեսքով մեզ վրա անջնջելի տպաւորութիւն են թողնում։

Հանգստանում ենք հսկայ աւերակների ստուերի տակ։

Կարդում ենք մեր դիմացը, պատից կպցրած տպագիր «Ազդը»։

Մի քանի անհրաժեշտ նախազգուշութիւններ նորեկ այցելուներին։

Վերջապէս անգնահատելի աւերակները ունեն իրանց անփոխարինելի խնամակալը, ազատվել են երկարամեայ անտէրութիւնից և արժանացել են խիստ հսկողութեան։

Մանում ենք պալիսպների դռնից աւերակների աշխարհը։ Անցնում ենք հնութիւնների միջով։

Անզուսպ հետաքրքրութեամբ նայում ենք աջ ու ձախ, այս և այն կողմ. անհամբեր փնտռում ենք անխոնջ հնագէտի պեղումների հետքերը։

Համարեա ամեն տեղ նկատվում են գիտնականի բեղմնաւոր աշխատանքի նշանները։ Կիսատ փորուածքները, լոյս աշխարհ ելած տները, ձիթհանքերը, բոլորն էլ գեղեցիկ, շնորհալի, չարքաշ անեցու կոշտացած ձեռքի արդիւնքներն են, որոնք դարերի ընթացքում հողի տակ պահել են իրանց ճարտարապետական և գեղարուեստական նրբութիւնները։

Մի առանձին խնամքով դուրս հանված աւերակների իւրաքանչիւր քարը, քանդակը և հետաքրքրական մասը դասաւորված են առանձին տեղ, նշանակված են համարներ և յիշողութեան համար հարկաւոր նշաններ։

Երևում են գիտական, սիստեմատիկ ուսումնասիրութեան հետքեր։

Վանահօր ընակարանն ենք հասնում։ Օգտվելով հայր-սուրբի նախապետական անկեղծ հիւրասիրութիւնից՝ մանում ենք հիւրանոց, ճանապարհի յոգնածութիւնից ազատվելու համար։

Մի ժամ չանցած շտապում ենք հնագիտական միւզէին, գիտելու վերջին պեղումներից հանված հետաքրքրական իրերը և լսելու հնագէտի բացատրութիւնները։

Մ. Ղազարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԴԱՒԱՌԻՑ

Շուշի, 31 օգոստոսի

1905 և 1906 թուերին Ղարաբաղի հայերը հրացանը ձեռներին պաշտպանում էին իրանց ծնողների, քոյրերի և եղբայրների պատիւը, չը թողնելով թշնամիներին ծօտենալու իրանց հարէմի օջախին և սրբազաղծելու։ Այն ժամանակ ամենքն էլ, մեծ ու փոքր, խրախուսում էին դրանց չը վհատվել, պատիւն աւելի թանգ գնահատել և երբէք չընկճվել թշնամու շատութիւնից։ Այն ժամանակ այդպէս էլ պէտք էր, որովհետև հայը ոչ մի տեղից պաշտպանութիւն չունէր։ Անցել են այդ փորձութեան և տառապանքի տարիները, այժմ ամեն ինչ խաղաղվել է, նախկին ժամանակներից էլ աւելի լաւացել։ Միայն հայերը այժմ խպառայլասերվել են, չը կան նախկին հաստատուն, առողջ հոգու տէր մարդիկ, այլ բարոյապէս փչացած, հոգով մնանկացած մի մասսա։ «Մշակը» իր թղթակցի բերանով հրատարակեց, որ Իրախիկ գիւղում պսակվելու նպատակով երկու երիտասարդ խարում են ծնողներին և նրանց աղջիկը տանում քաղաք, ապա մի ամիս պահելուց յետոյ վերադարձնում են ծնողներին։ Աղջիկայ եղբայրը այդ անպատուութիւնը տաջլնկայ եղբայրը այդ անպատուութիւնը տանել անկարողանալով՝ սրախողխող է անում իր հարազատ քրոջը։ Սարդարաշէն գիւղում հարևանի տղան գաղանաբար բռնաբարում է իր հարևանի աղջկան և դրա հետքը ծածկելու համար մաս-մաս յօշոտում է աղջկան։ Խանարադ գիւղում մի տղայ պսակվելով, դեռ առագաստ չը մտած, գիշերը սրով մաս-մաս կտրտում է նորահարսին, իր մի բարեկամի վրէժը լուծելու համար։ Այսպէս՝ ամեն տեղ վարակված են գողութիւնները, հրձիգութիւնները, կողոպուտը, ալան-թալանը, սպանութիւնը և, որ առաւելն է, վարքի և բարքի սարսափելի անկումը։ Ի՞նչ կը լինի այս ամենի վերջը, յայտնի չէ, միայն այսքանն է պարզ, որ հայերը իրար դէմ զինվելով՝ պայքար են մղում իրար վնասելու և դրա համար ընտրել են մի անարդ միջոց, մատնութիւն... Խնդիրներով լցրել են պետական դիւանները. դրան հետևում են խուզարկութիւններ, կալանաւորումներ և տուգանքներ՝ զէնք ունենալու համար։ Որ գիւղ ուզում էք՝ մտէք, և կը տեսնէք այնտեղ երկու կուսակցութիւն իրար դէմ կուելիս։ Սրանք դեռ տանելի են. անտանելին վարքի և բարքի անկումն է։ Գիւղերում սովորութիւն է, որ հնձաւորների, մշակների, հանդում աշխատաւորների հացը կամ կերակուրը տանում են տան մնացած երեխաները կամ օրիորդները։ Այս քանի օրս դահրաւեցի մի օրիորդ տանելով մշակների հացը՝ հանդից վերադառնալիս պատահում է իր գիւղացի երկու երիտասարդի։ Դրանք օրիորդին բռնում են, քարշում մօտակայ մացառուտները և երկուսով բռնաբարում նրան, ապա յետոյ բաց թողնում։ Օրիորդի ծնողները բողոքում են քննիչին։ Սկսված է քննութիւն։ Ձերբակալվեցին այդ երիտասարդները, բայց արձակվեցին երաշխաւորութիւնով։ Ցեռագան աւելի վատ կը լինի, որովհետև ձգած սերմը արդէն արժանի պտուղները տալիս է։

Այս օրերս Դահրաւ գիւղում մի մարդ անզգոյշ վարվելով բերդան հրացանի հետ՝ գնդակահար արեց իր 10-ամեայ դստերը։ Լաց ու շիւանը ձգեց տունը, դաղեց ու մորմոքեց ծնողների սրտերը և անմոռաց վիշտ պատճառեց մօրը։ Վրա հասաւ պրիստաւը, խլեց հրացանը և գիւղացուն ձգեց ծանր տուգանքի տակ՝ զէնք պահելուն համար։ Արդեօք վախճան կունենան համանման դէպքերը։

*

Մեղրի, 30 օգոստոսի

«Միլիոս և օրիորդ» հիւանդութիւնը այս տարի բոլորովին չորացրել է խաղողի ողկոյզները, այնպէս որ այգի չը կայ, որի մէջ մի ողկոյզ խաղող գտնէ լինի կորելու. հա-հան այգիներ կան, ուր շատ ու քիչ խաղողը կիսով չափ ձեռք է բերվել։ Նոյն դրութեան մէջ է և Շիւանի-ձոր գիւղը։ Ծծումբով բժշկելը այս տարի չօգնեց. գիւղացիք յուսահատվել են. եթէ գալ տարի էլ ծծումբ փչելը անօգուտ անցնի, ստիպված կը քանդեն բերքի հասած խաղողի շատ այգիներ։ Ծանկալի կը լինէր, որ Գիւղատնտեսական Ընկերութիւնը գալ տարվայ համար օգնութեան գար՝ ինսորուկտոր ուղարկելով Մեղրիի շրջանում ցուցումներ անելու և բժշկելու ձևը ցոյց տալու աղքատ դասակարգին՝ ձրի ծծումբ տալով։

Երկարատև երաշտը յուսահատեցնում է տարի գիւղացիներին. աշնանացանի ժամանակն է, բայց անձրև չը կայ։ Այս տարի աշնանացանը սիկալ հունձ տուեց, իսկ գարնանացանից սերմն էլ ձեռք չը բերվեց։ Տափարակներում հունձը առատ էր։

Բարբակի բերքը սիրելակից լաւ է։

Եփրեմ Վարդանեան

—

Վերին-Աղդան, 31 օգոստոսի

Խլերան նոր էր հեռացել Վերին-Աղդանից և տխա բուն դրեց տիֆը։ Բաւականաչափ հիւանդներ կան արդէն. վարակվողների թիւը օր աւուր շատանում է. մանվան դէպքեր պատահել են։ Ցայտնեցինք՝ որ բժիշկը գայ օգնութեան։

Մ. ք. Տէր-Յարութիւնեան

—

Ծարսկիէ-Կօլօդցի, 3 սեպտ.

Օգոստոսի 21-ին անայտ չարագործներ Սուրբաժուռ սպանել են սղնախեցի յայտնի կապալառու Դաւիթ Պաատեանին։ Հանգուցեալը հարուստ էր, պարապում էր արգուցեալը հարուստ էր, պարապում էր արքունական կապալներով. 75 տարեկան, բաց առոյգ ծերունի էր։ Մինչև 1894 թ. հանգուցեալը բնակվում էր Ցարսկիէ-Կօլօդցիում, ապա տեղափոխվեց Թիֆլիս։ Այստեղ նա կառուցեց զանգակատուն, ծախսելով մօտ 1500 ր. ի յիշատակ իր հանգուցեալ ուսանող որդու, որի մասին հաղորդել ենք։ Նաստմբարի ուխտատեղին վազուց նուիրել էր 200 ր., որի տոկոսը պէտք է ստանայ քահանան։ Անցեալ տարի Պաատեանը նուիրեց մեր դպրոցին 50 ր. և խոստացել էր շարունակ օգնել։ Դաւիթ Պաատեանի մահը շատ ծանր է մեր աղքատ հասարակութեան համար։ Նա բարի մարդ էր և հասարակական գործերին համակրող։ Նա կամենում էր իր չինած զանգակատան համար բերել տալ մեծ զանգ, բայց ողբերգական մահը անկատար թողեց այդ։ Պատմում են, որ հանգուցեալը զոհ է դարձել շանտաժիստների, որոնք շարունակ փող էին պահանջելու եղել նրանից։ Պաատեանը մեռաւ անժառանգ։ Դիակը տարել են Սըղնախ, որտեղ թաղվել է օգոստոսի 29-ին։ Տեղիս հայ հասարակութիւնը ցաւակցական հեռագիր ուղարկեց Պաատեանի այրուն։ Ցանկալի է, որ Մարիամ Պաատեանը յաւերժացնէ իր ամուսնու յիշատակը որևէ նուէրով տեղիս դպրոցին։

Ն. Ն.

ԽՕԼԵՐԱՆ ԳԻՒՂԵՐՈՒՄ ՉԷ ՎԵՐՋԱՆՈՒՄ

—

Ինչպէս ուրիշ հիւանդութիւնների, նոյնպէս և խօլերայի պատճառը, գիւղացու հասկացողութեամբ, բնական չէ։ Նա այդ պատիժ ու պատուհասը ընդունելով յաւիտենից աստուածային վճիռ, էպիդիմիաների ժամանակ, չը հասկանալով «Ինքդ քեզ օգնիր, որ Աստուած էլ քեզ օգնէ» ապրելու համար անհրաժեշտ պայմանը, Աստուծոյ բարկութիւնը մեղմելու համար դիմում է զանազան կրօնական միջոցների, հասարակական մատաղ կտրում, հսկում կատարում, ընդհանուր պատարագ մատուցանում, խմբակցական ուխտեր գնում, որոնց ժամանակ հաշկերոյթներ սարքելով՝ հիւանդ և առողջ միասին բոլորված միևնոյն ամանից են ուտում, առանց հասկանալու, որ այսպիսի սովորութիւնները պատճառ են դառնում աւելի և աւելի տարածվելուն տարափոխիկ հիւանդութիւնների։

Թէև գիւղացին ըստ իր պապենական աւանդութեան աշխատում է միշտ ծածկել, թէ իրանցում տարափոխիկ հիւանդութիւն չը կայ, բայց և այնպէս ներկայիս խօլերան տարածվել է ամեն տեղ, մտել է ամեն ծակ ու ծուկ. նա այլ ևս չէ ծածկվում։

Բայց եթէ մենք հետաքրքրվենք գիւղացու առողջապահական կանոններով, կը համոզվենք, որ ոչ միայն խօլերան գիւղերում չէ վերջանում, այլ և ոչ մի գիւղացի ազատ չէ կարող մնալ վարակվելուց։

Ահա ձեզ փաստեր։

Որպէսզի խօսքս չերկարի, թողնենք գիւղը և գիւղացու տունը, մտնենք ուղղակի հիւանդի պառկած սենեակը։ Մենք այնտեղ կը տեսնենք, որ առատ պաշարի կեր ու խումից յղփացած ճանճերի հոյլը հիւանդի չորս կողմը պար բռնելով ճախրում է և խմբով շտապում հէնց դռնից ներս մտնող հիւանդատես այցելուին բարևելով մասն ու բաժին հասցնել նրան հիւանդութեան բացիլներից։

Մենք կը տեսնենք հիւանդը շրջապատված բարեկամներով ու դրացիներով, որոնցից ոմանք հիւանդի տեղաշորի վրա դինկ ընկած՝ իրանց յուսահատու կամ զուարճալի, նայելով հիւանդի դրութեան, զրոյցներով են զբաղեցնում նրան։ Ոմանք հիւանդի ճակատը, ձեռքերը, կուրծքը և այլ տեղերն են շոյում շօշափում։ Տանու մարդիկ բոլորն անխտիր այնտեղ են գործում, նրատում, նոյնիսկ ճաշում, այն նպատակով, որ հիւանդի ախորժակը զարթեցնեն։ Դիւղացու հայեացքով՝ հիւանդը որքան շատ ուտի, այնքան շուտ կառողջանայ։

Դիցուք մեռնում է հիւանդը։ Մեռելը դրվում է սենեակի մէջտեղը՝ երեսը բաց։ Նոյն սենեակը բերնէ բերան լցվում է գիւղական երկու սեռի հասարակութեամբ։ Ննջեցեալին շրջապատում են նրա մերձաւորները։ Իսկ երբ հերթը հասնում է վերցնելու ննջեցեալին, ասես որ աշխատում է իր վերջին պարտականութիւնը կատարել դէպի ննջեցեալը՝ հաւաքելով նրա ձեռքերն ու երեսը։ Նոյն բանը կատարվում է և գերեզմանատանը, բայց աւելի սահմանափակ չափով։

Երկրորդ օրը հիւանդի տեղաշորի և այլ շորեղէնների լուացման օրն է։ Հաւաքվում են գիւղի կանանցից շատերը։ Աւելի խելացի խօսք գիտեցողները իրանց խօսակցութեամբ, ժամերով նստած, մխիթարում են սգաւորների սիրտը, իսկ չքաւոր կանայք լուանալով մեռելի տեղաշորը, շորերը, դեղտոտ ջուրը թափում են փողոց, մարդկանց անցուդարձի վրա։ Թող չափազանցութիւն չը համարվի, սա իրողութիւն է։ Ինձ պատահել է տեսնել հիւանդի փսխունքի ամանը իր պառկած սենեակի անկիւնում դրված ու ճանճերով ծածկված, իսկ կղկղանքի տաշտակը նոյն տան բակում վեր դցած։

Ո՞վ պիտի հասկացնի գիւղացուն այսպիսի սովորութիւնների վնասակարութիւնը։

Քահանան։

Տարբերաբար, աննշան բացառութեամբ, մեր տէրտէրները տիֆով հիւանդի վրա «Կիպրիանոս», «Ուրբաթագիրք» կարդացողներ, գլխացաւի դէմ «հմայիլ» գրողներ, ոսկրացաւի դէմ «Թիլիսման» շինողներ, տենդի դէմ պատարագի առաջ «Ջերմ կապողներ» և խօլերայի դէմ, եթէ կարելի է անուանել, կրօնական զանազան հանդէսներ մոգոնողներ են։

Իսկ եթէ պատահում են գիւղերում քահանաներ և այլ անհատներ, որոնք բացատրելով առողջապահական կանոնները՝ հրաւիրում են ապրել այնպիսի պայմաններում, որ թէ չը վարակվեն և թէ հիւանդութիւնը շուտով վերանայ, այնպիսիներին արհամարհական կերպով սառն պատասխանում են թէ՝ «դրանք բոլորը դատարկ բաներ են, Աստուած մարդու ճակատին ինչ որ գրել է՝ նա պիտի տեսնի, գիրը չի ջնջվի։ Վերինը (Աստուած) գիտէ, վերինի կամքը այսպէս է» և այլն։ Դեռ այս բաւական չէ, սկսվում է խուլ հալածանք ու թշնամանք դէպի այդպիսի մարդիկ՝ համարելով նրանց աստուածներ։

Ուրեմն քանի որ գիւղերում իրերի դրութիւնը այսպէս անխիթար է, պէտք է եզրակացնել, որ անհրաժեշտ է այստեղ հեռագրական տեղեկատուութիւն։

Ինչպէս ուրիշ հիւանդութիւնների, նոյնպէս և խօլերայի պատճառը, գիւղացու հասկացողութեամբ, բնական չէ։ Նա այդ պատիժ ու պատուհասը ընդունելով յաւիտենից աստուածային վճիռ, էպիդիմիաների ժամանակ, չը հասկանալով «Ինքդ քեզ օգնիր, որ Աստուած էլ քեզ օգնէ» ապրելու համար անհրաժեշտ պայմանը, Աստուծոյ բարկութիւնը մեղմելու համար դիմում է զանազան կրօնական միջոցների, հասարակական մատաղ կտրում, հսկում կատարում, ընդհանուր պատարագ մատուցանում, խմբակցական ուխտեր գնում, որոնց ժամանակ հաշկերոյթներ սարքելով՝ հիւանդ և առողջ միասին բոլորված միևնոյն ամանից են ուտում, առանց հասկանալու, որ այսպիսի սովորութիւնները պատճառ են դառնում աւելի և աւելի տարածվելուն տարափոխիկ հիւանդութիւնների։

Թէև գիւղացին ըստ իր պապենական աւանդութեան աշխատում է միշտ ծածկել, թէ իրանցում տարափոխիկ հիւանդութիւն չը կայ, բայց և այնպէս ներկայիս խօլերան տարածվել է ամեն տեղ, մտել է ամեն ծակ ու ծուկ. նա այլ ևս չէ ծածկվում։

Բայց եթէ մենք հետաքրքրվենք գիւղացու առողջապահական կանոններով, կը համոզվենք, որ ոչ միայն խօլերան գիւղերում չէ վերջանում, այլ և ոչ մի գիւղացի ազատ չէ կարող մնալ վարակվելուց։

Ահա ձեզ փաստեր։

Որպէսզի խօսքս չերկարի, թողնենք գիւղը և գիւղացու տունը, մտնենք ուղղակի հիւանդի պառկած սենեակը։ Մենք այնտեղ կը տեսնենք, որ առատ պաշարի կեր ու խումից յղփացած ճանճերի հոյլը հիւանդի չորս կողմը պար բռնելով ճախրում է և խմբով շտապում հէնց դռնից ներս մտնող հիւանդատես այցելուին բարևելով մասն ու բաժին հասցնել նրան հիւանդութեան բացիլներից։

Մենք կը տեսնենք հիւանդը շրջապատված բարեկամներով ու դրացիներով, որոնցից ոմանք հիւանդի տեղաշորի վրա դինկ ընկած՝ իրանց յուսահատու կամ զուարճալի, նայելով հիւանդի դրութեան, զրոյցներով են զբաղեցնում նրան։ Ոմանք հիւանդի ճակատը, ձեռքերը, կուրծքը և այլ տեղերն են շոյում շօշափում։ Տանու մարդիկ բոլորն անխտիր այնտեղ են գործում, նրատում, նոյնիսկ ճաշում, այն նպատակով, որ հիւանդի ախորժակը զարթեցնեն։ Դիւղացու հայեացքով՝ հիւանդը որքան շատ ուտի, այնքան շուտ կառողջանայ։

Դիցուք մեռնում է հիւանդը։ Մեռելը դրվում է սենեակի մէջտեղը՝ երեսը բաց։ Նոյն սենեակը բերնէ բերան լցվում է գիւղական երկու սեռի հասարակութեամբ։ Ննջեցեալին շրջապատում են նրա մերձաւորները։ Իսկ երբ հերթը հասնում է վերցնելու ննջեցեալին, ասես որ աշխատում է իր վերջին պարտականութիւնը կատարել դէպի ննջեցեալը՝ հաւաքելով նրա ձեռքերն ու երեսը։ Նոյն բանը կատարվում է և գերեզմանատանը, բայց աւելի սահմանափակ չափով։

Երկրորդ օրը հիւանդի տեղաշորի և այլ շորեղէնների լուացման օրն է։ Հաւաքվում են գիւղի կանանցից շատերը։ Աւելի խելացի խօսք գիտեցողները իրանց խօսակցութեամբ, ժամերով նստած, մխիթարում են սգաւորների սիրտը, իսկ չքաւոր կանայք լուանալով մեռելի տեղաշորը, շորերը, դեղտոտ ջուրը թափում են փողոց, մարդկանց անցուդարձի վրա։ Թող չափազանցութիւն չը համարվի, սա իրողութիւն է։ Ինձ պատահել է տեսնել հիւանդի փսխունքի ամանը իր պառկած սենեակի անկիւնում դրված ու ճանճերով ծածկված, իսկ կղկղանքի տաշտակը նոյն տան բակում վեր դցած։

Ո՞վ պիտի հասկացնի գիւղացուն այսպիսի սովորութիւնների վնասակարութիւնը։

Քահանան։

Տարբերաբար, աննշան բացառութեամբ, մեր տէրտէրները տիֆով հիւանդի վրա «Կիպրիանոս», «Ուրբաթագիրք» կարդացողներ, գլխացաւի դէմ «հմայիլ» գրողներ, ոսկրացաւի դէմ «Թիլիսման» շինողներ, տենդի դէմ պատարագի առաջ «Ջերմ կապողներ» և խօլերայի դէմ, եթէ կարելի է անուանել, կրօնական զանազան հանդէսներ մոգոնողներ են։

Իսկ եթէ պատահում են գիւղերում քահանաներ և այլ անհատներ, որոնք բացատրելով առողջապահական կանոնները՝ հրաւիրում են ապրել այնպիսի պայմաններում, որ թէ չը վարակվեն և թէ հիւանդութիւնը շուտով վերանայ, այնպիսիներին արհամարհական կերպով սառն պատասխանում են թէ՝ «դրանք բոլորը դատարկ բաներ են, Աստուած մարդու ճակատին ինչ որ գրել է՝ նա պիտի տեսնի, գիրը չի ջնջվի։ Վերինը (Աստուած) գիտէ, վերինի կամքը այսպէս է» և այլն։ Դեռ այս բաւական չէ, սկսվում է խուլ հալածանք ու թշնամանք դէպի այդպիսի մարդիկ՝ համարելով նրանց աստուածներ։

Ուրեմն քանի որ գիւղերում իրերի դրութիւնը այսպէս անխիթար է, պէտք է եզրակացնել, որ անհրաժեշտ է այստեղ հեռագրական

ղինակաւոր զօրեղ ձեռքի գործունէութիւնը, ապա թէ ոչ խօլերան գիւղերում չի վերջանում։ Հայ Ախալցխա

ԹՂԹԱԿԻՑԸ ԲԱՐԵԿԱՄ ԶՈՒՆԻ

—

Եթէ թղթակիցը մեծ պատիւ և համարում ունի գիտակից հասարակութեան շրջաններում, նա, ընդհակառակն, ոչ մի բարեկամ և համակրող չունի գիւղական խուլ անկիւններում, գաւառական ռամիկ ժողովրդի մէջ։

Կարծիք չը կայ, որ թղթակցի կոչումն է ժողովրդի և հասարակութեան ցաւերի թարգման հանդիսանալ, նրա իղձերի արտայայտիչը լինել։ Բացի դրանից՝ թղթակցի պարտականութիւնն է ճշգրիտ կերպով պատկերացնել ժողովրդական կեանքը իր բոլոր երևոյթներով, առանց իրերի դրութիւնը յեղաշրջումներով նկարագրելու։

Ես սիրում եմ հաւատալ նաև, որ ժողովրդի, մանաւանդ գաւառական ռամիկ ամբոխի ցաւերը թղթակցի ցաւերն են, նրա ուրախութիւնը՝ թղթակցի ուրախութիւնը։

Եւ, եթէ ուզում էք, թղթակիցը պէտք է գիտենայ պաշտպանել, գնահատել ժողովրդական շահերը նոյնիսկ իր սեփական շահերից բարձր։ Թող սա ծաղր չը թւայ շատերին. ես այդ մտքով եմ հասկանում թղթակցի, լրագրողի անմիջական, քաղցր պարտականութիւնը, նրա բարձր կոչումը։

Սակայն այն էլ կասեմ, որ թղթակցի սրտի լարերը այն աստիճան զգայուն են, այն աստիճան նուրբ, որ ամեն մի դժբաղդութիւն, ամեն մի աղէտ, որ վերաբերում է ամբողջ հասարակութեան, վերաբերում է նաև թղթակցին, որի սրտի լարերին զգալի կերպով դիպչում է նոյն այդ աղէտի ծանրութիւնը։ Մի խօսքով՝ թղթակիցը «ժողովրդի մարդն է», որը իր սեփական բարիքն է համարում բուն ժողովրդի բարիքը և, ընդհակառակն, ժողովրդի չարիքը իր անձնական չարիքն է հաշւում։ Ուրիշ կերպ՝ թղթակիցն չէ կարելի այդ կոչումը շնորհել, այլ այդ պաշտօնը նրա համար կը լինի լոկ անձնական, կոչումը՝ կեղծ, դեմիզը ֆալսիֆիկացիայի վրա հիմնված, մի գործ, որը ոչ մի բանի նման չի լինի...

Թղթակից եմ ասում, որը լաց լինէր ժողովրդի հետ նրա դժբաղդութիւնների և աղէտների ժամանակ, ուրախանար՝ նրա բաղդաւորութեան և խնդումների միջոցին, մեռնէր նրա հետ՝ նրա նահատակութեան ժամանակ։ Այլապէս՝ հակառակ այս պարագաների, ես մուր կը քսեմ այն թղթակցի երեսին, որը չի ձգտի անաչառ լինել դէպի ժողովուրդը, չի գիտակցի հասարակական ընդհանուր շահերը, այլ լոկ այդ անունը և պաշտօնը կրելով կամփոփվի իր մէջ և կը հետաքրքրվի իր նեղ շրջանով միայն։

Բայց ես շեղվեցի իմ ճանապարհից. ես կամենում էի այստեղ նկարագրել թղթակցի դրութիւնը, նրա յարաբերութիւնը ժողովրդի հետ։ Բայց ես թւեցի աւելի շուտ թղթակցի պարտականութիւնները, ցոյց տուի նրա կոչումը։ Սակայն այդ էլ գուցէ կարևոր է թղթակցի դերը պարզելու, նրա պաշտօնը որոշելու համար։

Դառնանք բուն խնդրին։ «Թղթակիցը բարեկամ չունի»—ասում է յօդուածիս վերնագիրը, և դա շատ պարզ է։ Թղթակիցը նկարագրում է, դիցուք, գիւղական կեանքի երևոյթները, որոնց մէջ մտնում են ժողովրդի վարք ու բարքի, նրա նիստ ու կացի, հաւատալիքների, սովորութիւնների և այլ պատկերներ՝ իրանց լաւ և վատ կողմերով։ Եւ ահա կարդալով լրագրում այդպիսի մի նկարագրութիւն՝ ժողովուրդը սկսում է ալեկոծվել, յայտնելով թէ ինչու է հրապարակ հանված իր ընտանեկան-տնտեսական կեանքի պայմանները և այլն։ Այդպիսի դէպքերում աւելի վատ տպաւորութիւն է թողնում և անախորժութիւններ առաջացնում, երբ, օրինակ, ընթերցողը այլ կերպ է մեկնաբանում*) ռամիկ ամբոխի առաջ լրագրի թղթակցութեան միտքը, թէկուզ այդ գրուածքը լինէր նոյն իսկ յօդուտ նոյն ամբոխի և հասարակութեան։ Մի խօսքով՝ լաւը վատի տեղ, ծուռը շիտակի փոխարէն և ընդհակառակն է հասկացվում գիւղական շրջաններում և այդ իսկ պատճառով ամեն մի թղթակցութիւն՝ նպաստաւոր լինի նա թէ աննպաստ հասարակական հարցերի նկատմամբ՝ համարվում է աւելորդ և միանգամայն անհաճոյ գիւղական խաւար ամբոխի համար...։

«Ինչու՞ են գիւղի գաղտնիքը դուրս տուել, գաղէթ գցել»—քիչ բացառութեամբ յայտնում են գիւղականները միաբերան և սկսում են վայր ի վերոյ լուտանքներ կարդալ թղթակցի հասցէին։ Դա դեռ թղթակցութեան, նրա վերաբերմամբ։ Ապա դուք տեսէք, թէ ինչ կերպ են վերաբերվում դէպի յօդուածագիրը, դէպի թղթակիցը։ Նախ և առաջ նրան ուզում են գտնել և, անձամբ հետը խօսելով, բացատրութիւն պահանջել, թէ «ինչու է իրանց գիւղի բանը գաղէթ գցել»։ Շատ էլ պակասութիւններ կամ առաւելութիւններ ունի գիւղի հասարակութիւնը։ Նրա, թղթակցի, ինչին է պէտք այդպիսի բաների երևան հանելը. նրա ինչ գործն է ուրիշի բաների մէջ խառնվել և այլն և այլն։

*) Դիւղում բոլորը գաղտնի չեն խմանում, այլ մէկը կամ մի քանիսը, որոնց սրտին չը նստելով իւրաքանչիւր լրագրի թղթակցութիւնը, ուստի յոռետեսութեամբ լցված կարդալով՝ ծուռ մտքով են մեկնաբանում ժողովրդի առաջ։

Ուզում էք հաղար անգամ բացատրէք, հասկացրէք, թէ հասարակութեան հակումներ ուղղելու համար, անխիղճ վաշխառուներին սանձելու, անկուշտ հոգևորականութեան կողոպուտը մեղմելու, վաճիրը տանուտէրի երասանակը ձգելու, ընչաքաղց դուքանչու դնչին տալու համար հարկաւոր է գրել, դրանց սխրագործութիւնները հարկաւոր է երևան հանել, որպէսզի նրանք ամաչեն, թողնեն իրանց վատութիւնները, վաղ գան ժողովրդից, նրա եախէն բաց թողնեն, ուղղվեն։ Բայց դարձեալ չէք կարող համոզել ռամիկ ժողովրդին։ Դուք դարձեալ մնալու էք նրա աչքում իբրև «գաղէթաչի», իբրև վատ բաներ յօրինող, իբրև ծուռ ու շիտակ գործեր մոգոնող, որը բոլորովին լաւ համարում չէ կարող ունենալ անգիտակից հասարակութեան շրջանում...

Եւ ահա այդ տեսակէտից մենք միանգամայն յայտնում ենք, որ թղթակիցը բարեկամ չունի գիւղական կամ գաւառական ռամիկ ժողովրդի մէջ, այն ժողովրդի, որի ցաւերն, ինչպէս վերևն ասացի, թղթակցի ցաւերն են։ Սակայն այդ բոլորի հակառակ նա, գաւառական թղթակիցը, շատ թշնամիներ է վաստակում, որոնց ինտրիգների, բռունցքների և մատնութիւնների շնորհիւ նոյնիսկ տուժում է թէ նիւթապէս, թէ բարոյապէս և թէ ֆիզիկապէս։

Ապա ինչպէս պէտք է անել, որ թղթակիցը փոխանակ թշնամիների՝ բարեկամներ ճարի գաւառներում։ Բայց այդ մասին յաջորդ անգամ։ Գ. Սինանեան

Նոր-Բայազէտ, 27 օգոստ.

ԽՕԼԵՐԱ ԵՒ ԺԱՆՏԱԽՏ

—

Բիւլլետեն.—Սեպտ. 4-ի առ. ժամը 9-ից մինչև սեպտ. 6-ի առ. ժամը 9-ը թիֆլիսում խօլերայով հիւանդացել են 2 հոգի։ Հիւանդանոցում կային 12 հոգի, աւելացել են 2, մեռել է 1 հոգի, ներկայումս կան 11 հոգի։

◆ Սեպտ. 4-ին և 5-ին Թիֆլիսում խօլերային նշաններով հիւանդացան և ուղարկվեցին բարակները. 1) Ֆօմինայա փող. № 8 տանը տանտէր Նադէժդա Իվանօվնա Նադզրաչէվան՝ 59 տարեկան և 2) 3-րդ Սրետէնսկի տուպիկում № 11 տանը Թիֆլիսեցի Վարդանուշ Յակոբեան Տէր-Վախանգեանցը՝ 3 տարեկան։

Հիւանդացածների բնակարանները ախտահանված են։

◆ Ալէքսանդրօպոլում խօլերան աստիճանաբար պակասում է։ Ներկայումս այնտեղ կան 24 հիւանդներ։

—

4 սեպտեմբերի

Պետերբուրգ.—Մի օրում խօլերայով հիւանդացան 44, մեռան 19։

Մի շաբաթվայ մէջ Գոգոլի նահանգում հիւ. 206, մեռ. 86. Պէնզայի նահ. հիւ. 108, մեռ. 68. Բոստօվ Դ./վ. հիւ. 3, մեռ. 2. Սամարայի նահ. հիւ. 2058, մեռան 1035, Սիմբիրսկի նահ. հիւ. 278, մեռ. 134. Տաւրիկեան նահ. հիւ. 90, մեռ. 45. Ծամբօվի նահ. հիւ. 366, մեռ. 188. Խարկովի նահ. հիւ. 103, մեռ. 51. Մենդէլինի գաւ. հիւ. 207, մեռ. 108. Կոստրոմայի նահ. հիւ. 63, մեռ. 28. Օդեսայում հիւ. 22, մեռ. 11. գաւառում համաճարակի սկզբից հիւ. 711, մեռ. 300։

Հակաժանտախտային ժանտաժողովը յատկացրեց 20,000 ր. երկու ամսում կրօնաշտում բժշկա-հակիչ կայան հաստատելու և պահպանելու համար։

5 սեպտեմբերի

Պետերբուրգ.—Խօլերայով հիւ. մի օրում 43, մեռան 17. բժշկվում են 583։

Մի շաբաթում Բագում հիւանդացել են 25, մեռել են 13. Բալախանում հիւ. 3, մեռ. 4. Վօրոնէժի նահ. հիւ. 205, մեռել 112. Տաշկէնտում հիւ. 10, մեռ. 7։

Օդեսա.—Դեսասկինի նախաձեռնութեամբ հաստատվում են բակտէրիօլոգիայի և էպիդէմիօլոգիայի դասընթացքներ Ռուսաստանի նաւահանգիստներից ուղարկված բժիշկների համար։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Այժմ Կովկասում հիւր է ֆինանսների մինիստր Կոկօցէվը։ Մինիստրին ընդառաջ գնաց Թիֆլիսի նահանգապետը, որի ուղեկցութեամբ մինիստրը Ռազմավիրական ճանապարհով աւտոմօբիլով մեկնեց Փուգաուս, ուր դիտելու է այն լեռնաշղթան, որի միջով անցնելու է ապագայ երկաթուղին։

◆ Թիֆլիսում բժ. Իստամանեանը արդէն ստացաւ Էրլիխի «606» պրէպարատը, որի գործադրութիւնը մի հիւանդի վրա կատարվեց երէկ։ Այսօր բժ. Իստամանեանը բժշկական ընկերութեան մէջ ցոյց կը տայ սիֆիլիսով մի ծանր հիւանդի, որից յետոյ «606»-ը կը սրսկէ նրա կաշուի տակ։ Ի միջի այլոց նոր գիւտի փորձնական գործադրութեանը ներկայ լինելու հրաւիրված են բոլոր ձայնաւոր բժիշկները։

◆ Քաղ. վարչութիւնը Թիֆլիսի քաղ. բոլոր տարբերական դպրոցներում և Վէրայի աուդիտօրիայում պարտաւորեցրել է գործածել եռացրած ջուր։

◆ Կիրակի, սեպտեմբերի 5-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Թիֆլիսում մի քառորդ ժամի չափ տեղացաց կարկուտ, որը շուտով հալվեց։ Եղանակը այժմ զով է։

◆ Թիֆլիս քաղաքի 1911 թ. եկամտի նախահաշիւի քննութիւնը արագացնելու համար շաբաթական երկու անգամ տեղի կունենան քաղաքային վարչութեան նիստերը ֆինանսական մասնաժողովի մասնակցութեամբ։

◆ Թիֆլիսում կազմակերպվել և արդէն սկսել է գործել «Իշխ. Պ. Ի. Թումանովի Մայկոպի նաւթարդիւնաբերական Թիֆլիսի ընկերութիւնը», որի հիմնական դրամագլուխը է 500,000 ռուբլի։ Ցիշեալ Թումանովը Թիֆլիսի գաւառական ազնուականութեան պարագլուխն է։

◆ Թիֆլիսի հասարակական կլուբը իր ձմեռվայ սէզօնը կը բանայ այս ամսի 18-ին։

◆ Թիֆլիսի նահանգապետի թոյլտուութեամբ 2 ամսով Ռուսաստանի ներքին նահանգները մեկնած արձակուրդից վերադարձաւ վաճառականների աւագ Ա. Ն. Միլովը և ստանձնեց իր պարտականութիւնները։

◆ Կիրակի, սեպտեմբերի 5-ին, վրաց ազնուականութեան բանկի դահլիճում կայացաւ վրաց «Սանթուրի» նոր երաժշտական ընկերութեան հիմնադիր ժողովը, որը քննեց նոր հաստատված կանոնադրութիւնը և ընտրեց վարչութիւն ու վերատուչիչ յանձնաժողով։ Վրաց երիտասարդ բէլէտրիստ Իա Էկալաձէի առաջարկութեամբ ժողովը միաձայն պատուաւոր անդամ ընտրեց վրաց անուանի մանկավարժ Գօգէբաշվիլիին, որի մանկավարժական գործունէութեան 45-ամեակը լրացաւ այս տարի։ Պատուաւոր անդամներ ընտրվեցին վրաց յայտնի եպիսկոպոսներ Կիրիոնը և Լէօնիդը։ Ընկերութեան նպատակն է ժողովրդական, ազգային և կրօնական-եկեղեցական երգերի հաւաքումը, մշակումը և տարածումը։

◆ Երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութիւնը դրական մտքով է վճռել Քութայիսի նահանգի Օզուրգէթի գաւառում թէյի գործարան հիմնելու հարցը։

◆ Քութայիսում այս վերջին օրերս փողոցներում նկատելի են շրջիկ եապօնացի առաքիչներ, որոնք շատ էժան՝ անից տուն շրջելով իրանց ծառայութիւնն են առաջարկում։

◆ Գանձակի գաւառի Բայեան գիւղում սեպտ. 1-ին կալանաւորել են առաջին Պետական Դումայի անդամ Տէր-Աւետիքեանին։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Սեպտեմբերի 4-ին, երեկ. ժ. 9-ին, բաթումեցի Դիմիտրի Շիրկօվը մտաւ պարսկահպատակ Զաքար Վարդանեանի կրպակը՝ Դեսիժնօվսկայա հրապարակի վրա, ուր նրա հետ դրամական հաշիւների պատճառով վէճի բռնվեց, որը վերջում փոխվեց ծեծի ու ջարդի, որի ժամանակ Վարդանեանը կորցրեց մի ֆունտանոց քարը և խփեց նրանով Շիրկօվին գլխից, պատճառելով թեթև վէրք։ Վիրաւորվածին բժշկական օգնութիւն հասցնելուց յետոյ Միքայէլեան հիւանդանոցից տուն ուղարկեցին։ Վարդանեանը ձերբակալված է։

◆ Նոյն օրը, երեկոյեան ժամը 10-ին, Ամատունէվկայա փողոցում, № 2 տան դռան մօտ դռնապան Վասիլի Բարնաբաշվիլին գտաւ $1\frac{1}{2}$ ամսական տղայ երեխայի, որ գտնվում է այժմ Օլգինսկի ապաստարանում։

◆ Սեպտեմբերի 5-ին Բեսարաբիայի նահանգի բնակիչ Իլիա Մանօլին, որ ապրում է Ցինէսսկայա նրբանցքում, № 4 տանը, յայտնեց ոստիկանութեան, որ իր եղբայր Իվանը գողացել է իր անցագիրը և զինուորական կոչնագրի վկայականը։ Ոստիկանութեան գործակալների շնորհիւ Իվան Մանօլին կալանաւորված է։ Նա յիշեալ թղթերը գողացած է եղել զինուորական ծառայութիւնից խուսափելու նպատակով։

◆ Լոյս սեպտեմբերի 6-ի գիշերը, Բանայա փողոցի № 17 տանը, յանկարծական եղաւ գարեջրատուն պահող Ակուլինա Բիւզուկը՝ 42 տարեկան։

◆ Սեպտեմբերի 4-ին և 5-ին եղան շրջկալները քաղաքի մի քանի թաղամասերում, որոնց ժամանակ ձերբակալվեցին անգործ և անանցագիր մարդիկ։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

—

◆ «Баку» լրագրում կարդում ենք. «Այս օրերս Բագում տեղի կունենայ հայ դրամատէրերի մի խմբի և նրանցից ընտրված յատուկ մասնաժողովի խորհրդակցութիւնը էջվիածնի հողերը ոռոգելու խնդրի վերջնական լուծման հարցի առիթով։ Կը քննվի ոռոգման ծրագիրը, որ արդէն մշակել են մասնագէտները, ծախքերի նախահաշիւը, շահագործման նախագիծը և ամբողջ ձեռնարկութիւնը իրագործելու հարցը։

◆ Բագու քաղաքը 1910 թուի ընթացքում ոստիկանութեան պահպանութեան համար տալու էր պետական գանձարանին 228,974 ր.։ Սակայն մինչև օրս քաղաքի դրամարկղի միջոցների աղաքութեան պատճառով ոչինչ վճարված չէ։

◆ Նախագծվում է ընդլայնել Բագուի երկաթուղային կայարանը։

◆ Ալի-Փաշա Հուսէյնօվը խնդրամատոյց է եղել քաղաքապետին՝ թոյլ տալ հրատարակել թուրքերէն մի գրական-գիտական, հասարակական և քաղաքական շաբաթաթերթ «Ենի Ֆէիւզաթ» անունով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Շաբաթ, սեպտ. 4-ին, Զուբալովեան ազնուական ժողովրդական Տանը կայացաւ վրացերէն գրական երեկոյթ, մասնակցութեամբ յայտնի դերասան Վլ. Ալէքսիէվ-Մէսխիշվիլիի, վրաց երիտասարդ բանաստեղծներից մի քանիսի և հայ-վրացական բեմերի տաղանդաւոր դերասան Գ. Միրզեանի։

Երիտասարդ բանաստեղծներից իւրաքանչիւրը կարդաց իր բանաստեղծութիւններից։

Այդ երեկոյթը այնչափ ուսանելի էր, որ մենք թուրքիկ կերպով չենք կարող նուազագոյն գաղափար անգամ տալ ընթերցողներին, թողնելով մի պատեհ առիթի այդ մասին ընդարձակօրէն գրել, որպէսզի ծանօթացնենք վրաց երիտասարդ բանաստեղծների արտադրութեանց հետ։

Առայժմս այսչափը կասենք, որ վրացիների մէջ խոշոր թիւ են կազմում երիտասարդ բանաստեղծները, որոնք տաղանդաւոր կերպով երգում են՝ որը սէրը, որը պատօնական սէրը, որը հայրենիքը, որն էլ աշխատաւոր գիւղացու ցաւերը։

Վլ. Ալէքսիէվ-Մէսխիշվիլին արտասանեց Գօգոլի «Խելագարի նամակները»։ Վերջում Գ. Միրզեանը և Ն. Գօցերիձէն «Վայ-վայի» եղանակով՝ օրվայ չարիքների վրա՝ երգեցին կուպլէտներ, հանդիսականներին առողջ ծիծաղ պատճառելով։

Ապա գուրիացիների խումբը ազգային տարազով երգեց և պարեց մի քանի երգեր ու պարեր։

Երեկոյթը գրաւել էր ստուար քանակութեամբ հասարակութիւն։

Մենք շատ գոհ տպաւորութեան տակ հեռացանք թատրոնից։

Ցանկալի են նմանօրինակ երեկոյթների կազմակերպումները և մեր մէջ։ A—s

—

Կոթի գիւղ (Ղազախի գաւ.), օգոստ. 28-ին

Այսօր 17-ին տեղիս սիրողները, Թ. Պետրոսեանի ղեկավարութեամբ, ներկայացրին «Անկոչ հիւրը» և «Սուտ ճգնաւորը»։ Առաջին պիէսան շատերի համար անհասկանալի մնաց, մանաւանդ որշատ տեղեր պիէսից յապաւված էին։ Երկրորդը բաւականին լաւ տպաւորութիւն թողեց։

Սա երկրորդ ներկայացումն է, որ տրվում է դարձեալ ձրի։ Այս անգամ աւելի մեծ թուով հասարակութիւն կար։

Խաղատիրոջներին նուագում էր գրամօֆոնը։ Վերջը սկսվեց պարահանդէսը։ Պարեցին մի քանի ասիական պարեր, ինչպէս՝ լեզգինկա, կիւտօսրի, շալախօ, ուզունդարա և այլն, և մի քանի հայկական կլոր պարեր, որոնք նորութիւն էին գիւղացիներիս համար։

Հանդէսը վերջացաւ գիշերվայ ժամը 1-ին։ Ժողովուրդը հեռացաւ գոհ սրտով և բուռն ցանկութիւններով միշտ տեսնելու այդպիսի ներկայացումներ և հանդէսներ։ Ս.

ԹԱՏՐՕՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Ներկայ սէզօնում հայերէն լեզուով կը խաղացվեն վրացերէնի թարգմանված հետևեալ պիէսները.—«Խորտակված յոյսեր» Ազիսնիի, «Ընձվածները» և «Քրիստինէ» Իբսէնի, «Բժիշկ Աշիբրաղեան» Բամիշվիլիի, թարգմ. Ղ. Կարապետեանի, և «Դրամատիկական Ընկերութեան անդամը» Գօմարթելիի, թարգմ. Յ. Գասպարեանի։

◆ Ժողովրդական Տան հայկական սէկցիան մտադիր է տօնել դերասանուհի տ. Զարէլի բեմական գործունէութեան 30-ամեակը։

◆ Հիմնվում է թուրքաց դրամատիկական ընկերութիւն, որը գործելու է փոխադրութեան սահմաններում։

◆ Ալտիսական Ընկերութեան Թատրոնում սէզօնը կը սկսվի «Թայֆուն» պիէսայով։

◆ Թոյլատրված է Կովկասի բեմերի վրա ներկայացնել Յ. Զալեանի հայերէն նոր ինքնուրոյն պիէսը, որ կրում է «Գօրտսպիանն է միլաւոր», 5 գործ.։ Նիւթը վերցված է Թիֆլիսեցիների կեանքից։

◆ Վրաց Դրամ. Ընկ. միջոցները աւելացնելու նպատակով մօտ ապագայում կը կազմակերպվի մի երեկոյթ-ներկայացում, որի մէջ ի միջի այլոց կը մասնակցի ծերունազարդ բանաստեղծ Ակակի Ծերեթելին։

◆ Հանգուցեալ դերասանուհի Ն. Մ. Գարունիա-Ցագարելիի ժառան անունով „Рампа и Жизнь“ հանդէսի № 35-ում զետեղված է ցաւակցական մի յօդուած, իսկ „Театръ и Искусство“ հանդէսի № 34-ում զետեղված է հանգուցեալ դերասանուհու նկարը։

◆ Հայկական դրամատիկական խմբի ներկայացումները կը սկսվեն սեպտեմբերի 14-ից Արտիստական թատրոնում։ Ինչպէս յայտնի է, շնորհիւ Մանթաշեանի նուէրի, Դրամատիկական Ընկերութեան վարչութիւնը իր «մէջը ամուր» զգալով, հրաւիրեց դերասանների, ամեն մինին առանձին ամսականով։ Դերասանական ընկերակցութիւնը այդպիսով լուծվեց։ Հրաւիրվածների թուում ի հարկէ կան առաջնակարգ ոյժերի հետ նաև երկրորդական սկսնակ դերասաններ։

◆ Մեզ հաղորդում են, որ հայ դերասանների մի խումբ թատրոնական այս 1910/11 սէզօնին մտադիր է հաստատվել Բագում ու այնտեղ տալ մի շարք ներկայացումներ։

◆ Վրաց սէկցիայի խմբի ներկայացումները Զուբալովեան ժողովրդական տանը կը սկսվեն սեպտեմբերի 15-ից Սուքաթօվի յայտնի «Դաւաճանութիւն» պիէսով։

◆ Թիֆլիս եկաւ այս սէզօնին Արտիստական Ընկերութեան թատրոնի հետ պայմանաւորված Վ. Նիկուլինը իր խմբով։

◆ Արքունական թատրոնի անտրպրեներ Անտոն Էյխենվալդը նոյնպէս վերադարձաւ Թիֆլիս։ Նրա խմբի բոլոր անդամների գալուստը սպասվում է այս երկու օրս։ Այս ձմեռ Թիֆլիսի հասարակութիւնը առիթ կունենայ լսել մի քանի նոր օպէրաներ։

◆ Սեպտեմբերի 19-ին Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան թատրոնում կայանալու է յայտնի երգիչ Շալեաձինի հաւերգը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԱՒՐԻԶԻ «Խ. ԱԲՈՎԵԱՆ ԵՒ Մ. ԱՐԱՄԵԱՆ» ԳՐ. ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

—

Առաջ քան բուն նիւթին անցնելը՝ արժէ մի քանի խօսք ասել Թաւրիզի հասարակութեան ընթերցասէր չը լինելու մասին։

Ով ապրել է Թաւրիզում կամ ով մի քանի ժամանակով եկել է Թաւրիզ, նրա համար այս խնդիրը միանգամայն պարզ կը լինի։ Զուզենալով երկար խօսել ընթերցանութեան կարևորութեան մասիս՝ մենք աւելորդ չենք համարում ասել հետևեալը. փորձը ցոյց է տուել, որ III—IV դասարանից աւարտած աշակերտները, որոնք ընթերցասէր են եղել, կեանքի մէջ աւելի պիտանի, խելօք ու լուրջ անհատներ են դուրս եկել, քան մեր միջնակարգ դպրոցաւարտները, որոնք սովորել են փիլիսոփայութիւն, հոգեբանութիւն, տրամաբանութիւն և այլն և զուրկ են եղել ընթերցանութիւնից։ Ի՞նչ է ընթերցանութիւնը, եթէ ոչ մի միջոց, որով մարդ ծանօթանում է իր շրջապատի և կատարվող երևոյթների հետ։ Ընթերցանութիւնն է, որ ընդլայնում է մարդու աշխարհայեացքը. դա է, որ մարդուս տալիս է՝ ինքնուրոյն մտածել և դատել, և, վերջապէս, ընթերցանութիւնն է, որ հիմնաւորում է անհատի տեսակէտը և տալիս ուրոյն հասկացողութիւն այլ և այլ երևոյթների նկատմամբ։ Իսկ մեր Թաւրիզի հասարակութիւնը կարծէք չէ ուզում ըմբռնել այս բոլորը և ցաւալին այն է, որ այդ նոյն երևոյթը նկատվում է մանուկ սերնդի՝ աշակերտութեան մէջ։ Այստեղի աշակերտութիւնը միանգամայն կտրված է ընթերցանութիւնից և միայն գիտէ գիշերները միսչև ժամը 12-ը դասախօսութիւնների գնալ։

Բաւական չէ կարծէք մեր հասարակութեան այս ցաւալի կողմը, միւս կողմից գալիս է պակասը լրացնելու գրադարան-ընթերցարանի անկանոնութիւնը։

Մի տարի սրանից առաջ Թաւրիզում գոյութիւն ունէին երկու գրադարան՝ Խ. Աբովեան և Արամեան, մէկը միւսից աւելի անկանոն և անշնորհ, շնորհիւ դարձեալ ղեկավար ուժերի՝ վարչութեան Մտածելով որ Թաւրիզի հասարակութիւնը բաւականին անհետաքրքրական է և խուսափող ընթերցանութիւնից, որոշեցին վերոյիշեալ գրադ.-ընթերցարանները միացնել և միացեալ ոյժերով գործը տանել աւելի լաւ հիմքերի վրա։ Ուրիշ խօսքով՝ յիշեալ վարչութեան անդամների «շնորհքը և կարողութիւնը» ի մի խմբելով կառավարել այն աւելի լաւ։

Սակայն գործը բոլորովին վատթարացաւ, երբ այդ երկու անկարող ոյժերի մինուսները միացին, և դուրս եկաւ աւելի խայտառակ (իր անտարբերութեամբ) վարչութեան կազմ։ Այժմ Թաւրիզն ունի մի գրադարան, ուր մեր հայ՝ երկու զոյգ մի կէստ թերթերից մեծ մասը չէ ստացվում։

Եւ այս խղճալի վիճակը յատուկ է մեր բոլոր կուլտուրական հաստատութիւններին։

Այսօր է Թաւրիզի հասարակութեան, որը իւրաքանչիւր կերպի շուտ-շուտ կազմակերպում է զբօսանքներ և քէֆեր, իսկ ինչ վերաբերում է աւելի լուրջ կուլտուրական գործի ձեռնամուխ լինելուն, նա հեռու է փախչում։

Թողնելով դա մի կողմ, այժմ անցնենք գրադարանի ունեցած արժէքաւոր գրքերի մասին, որոնք մեր աչքին գոհարներ են։ Թաւրիզի կենտ. «Խ. Աբովեան և Արամեան» գրադարանն ունի մագաղաթի վրա ձեռագրած մի շարք գրքեր, որոնք անշուշտ գնահատելի են։ Սա մի մեծ հարստութիւն է։ Բաւական չէ որ ոչ ոք չէ օգտվում ձեռագրերից, այլ և ցաւալին այն է, որ բաժին են դառնում Թաւրիզի մկներին։ Ես հրացմունքով էի կարդում Զ. Կ. Իւնգի գրադարանի մասին, թէ ինչպէս այդ մարդը անագին ծախսեր է անում հաւաքելու համար ամեն տեսակի գրքեր, իսկ մեզ մօտ կան գոհարներ, որոնք փոշու և կեղտի մէջ են փտում։ Կայ մի ձեռագիր (թղթի վրա) 30 ֆունտ ծանրութեան և մի շարք մագաղաթի վրա ձեռագրած գրքեր, որոնք այնքան նուրբ են պատրաստված, որ թողնում են ճիշդ թղթի տպաւորութիւն։ Թէ ինչ վիճակի մէջ են գտնվում կամ ինչպէս են խնամվում այդ գոհարները, աւելորդ չեմ համարում յիշել իմ և գրադարանապետ՝ խօսակցութիւնը։

— Կարելի՞ է գրադարանի ձեռագրերը տեսնել,—հարցրի ես։

— Ինչու չէ,—պատասխանեց նա,—միայն պէտք է շորս երդ փոխէք և ապա գաք նայելու։

— Ինչու՞,—զարմացած հարցրի։

— Այնքան փոշոտ ու կեղտոտ են, որ անպայման հարկաւոր են հին շորերով գալ։

Այս փոքրիկ խօսակցութիւնից դժուար չէ ըմբռնել, թէ ինչ ատաճանի է հասնում վարչութեան հոգատարութիւնը դէպի իրան յանձնված գործը։

Մենք ափսոսում ենք և առաջարկում ենք այդ գոհարների վրա առանձին ուշադրութիւն դարձնել՝ որ ապահովպահվի և, որ ամենագլխաւորն է, կարելի լինի օգտվել։ Մենք վարչութեան ուշադրութիւնն են հրաւիրում, յուսալով որ նա քնած վիճակից աչքերը բաց կանէ և առանձին հոգատարութեամբ կը հետևէ վերոյիշեալ կարևոր գործին, այլապէս, աւաղ, կորչում են գոհարները։

Ֆօրշլագ

Թաւրիզ, 26 օգոստոսի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Նորօրինակ դաստարան.—Նիւ-Եորկում այս օրերս իր գործողութիւնները սկսեց մի բոլորովին նոր հաստատութիւն՝ մշտական միջնորդ դատարան ամեն տեսակ ընտանեկան վէճեր, տղամարդկանց ու կանանց ընտանեկան երկպառակութիւններ, խռովութիւններ վճռելու համար։ Նիստերը տեղի են ունենալու ամեն օր։ Բացման օրը հաստատ կահաւորված սենեակում ժողովվել էր բազմաթիւ ժողովուրդ. այստեղ էին թէ հարուստ և թէ աղքատ դասակարգի կանայք։ Դատաւորը առանց ձևականութիւնների նիստը բաց յայտարարեց և խնդրեց կողմերին բացատրել իրողութիւնը առանց արտասվելու և փոխադարձ վիրաւորանքների։ Առաջին իսկ օրը աշողվեց քննել մի քանի գործեր, և, ի միջի այլոց, հաշտեցնել երկու վաղուց թշնամի ամուսիններ։

✦ Տուբերկուլեօզի որոշումը.—Մինչև օրս տուբերկուլեօզի որոշումը թուլա կուրծք ևթոքախտին շուտ ենթարկվող մարդկանց մօտ զարգացման նախնական ստադիայի մէջ դժուարութեամբ էր դիտնօղի ենթարկվում։ Դրա համար պահանջվում էր, որպէսզի հիանդութիւնը որոշ ատաճանի մտնէր իր իրաւունքների մէջ։ Նոյնիսկ բակտէրիօլոգիական քննութիւնները տուբէրկուլեօզի բշտիկների գոյութիւնը որոշելու համար երբէք չէն եղել բաւարար և ճիշդ։ Ներկայումս իտալեանցի երիտասարդ բժիշկ Բօգասօնը, որ երկար ժամանակ աշխատում էր դանիական սանատօրիաներից մինում, գտել է մի նոր ճշգրիտ միջոց՝ որոշելու տուբէրկուլեօզը հէնց սկզբից և եթ 75% հիանդների վերաբերութեամբ, որոնք սկզբում առողջ էին ճանաչվել, բժիշկ Բօգասօնը երեան հանեց թոքախտի բացիները։ Ուշադրութեան առնելով, որ տուբէրկուլեօզը ամենից շուտ է բռնվում իր զարգացման հէնց առաջին շրջանում, կարելի է դիւրին կերպով ըմբռնել այն անագին նշանակութիւնը, որ կունենայ նոր գիւտը բժշկութեան մէջ։ Բժ. Բօգասօնին օգնող պրոֆեսորները շատ մեծ գովասանքով են խօսում նոր մեթօդի մասին։ Արդէն Դանիայի բժիշկները սկսել են նոր մեթօդը գործադրել սանատօրիաներում։

✦ Ինչպէս յայտնի է, այս օրերս լրացաւ Լէվ Նիկ. Տօլստոյի ծննդեան 82 տարին։ Այդ առիթով անգլիական համարեա բոլոր լրագիրներում երևացին հարակրական յօդուածներ հանճարեղ գրողի մասին։ Յօդուածների մէջ շեշտվում է այն անագին նշանակութիւնը, որ ունի նրա գրական գործունէութիւնը առանձնապէս Անգլիայում և Միացեալ-Նահանգներում, ուր նրա բրօշիւրները տարածվում են միլիոնաւոր քանակութեամբ։

ՀԵՌԱԴԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

4 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օդագնացութեան շաբաթը վաղվանից յետաձգվում է սեպտեմբերի 8-ին՝ վատ եղանակի և անպատրաստ լինելու պատճառով։

ՎԼԱԴԻՄԻՐ։ Բացվեց այգեգործների և մեղուաբոյծների համագումարը։

ՐԵՎԷԼ։ Նահանգապետի ներկայութեամբ բացվեց էստոնական գիւղատնտեսական և արհեստա-արդիւնաբերական հերթական ցուցահանդէսը երեք օրով։

ՖԷԼԼԻՆ։ Բացվեց գիւղատնտեսական և արդիւնաբերութեան ցուցահանդէսը 3 օրով։

ՇԱՎԷԼ։ Բացվեց գիւղատնտեսական ցուցահանդէսը։

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ։ Խաղրինակում ձերբակալվեցին 2 երիտասարդներ, որոնց մօտ գտնվեցին պօստից յափշտակված 10,000 ր.։

ՎԼԱՐՇԱՎԱ։ Գրիբնայա փողոցում ցերեկով մի քանի զինված անձեր Եարնուշկէվիչի գործարանի գանձապահից յափշտակեցին 3,000 ռուբլի, կրակեցին օգնութեան շտապած օֆիցէրի վրա և փախան աւտոմոբիլով։ Մի քանի ժամից յետոյ աւտոմոբիլը երևան հանվեց, շոֆէրը կալանաւորվեց։

ԱՐԽԱՆԳԷԼՍԿ։ Նահանգապետի առաջարկութեամբ գուման միաձայն որոշեց առաջիկայում Լոմոնոսովի յօբելեանը յաւերժացնել՝ քաղաքում Լոմոնոսովի անունով թանգարան հիմնելով։

5 սեպտեմբերի

ՄՕՍԿՎԱ։ Մի քանի օր առաջ, Մոսկվայի շրջակայքում տեղի ունեցող գրենադէրական գնդի վարժութիւնների ժամանակ, ամենքի ուշադրութիւնը իր վրա դարձրեց մի երիտասարդ, որ մանրագնին հետևում էր վարժութիւններին և կուի տեխնիկային։ Կասկածվելով լրտեսութեան մէջ, երիտասարդը ձերբակալվեց և ուղարկվեց հաւատավախտ, ուր երևաց, որ նա պրուսական լէյտենանտ Գէյնցէն է։ Նրա ձերբակալութիւնից յետոյ, գտնվեց նրա բնակարանը Մալախովկում, որի վրա նշանակվեց բռամակողմանի հսկողութիւն։ Մի փոքր ուշ՝ բնակարանը եկաւ մի երիտասարդ, որ հարց ու փորձ արեց անյայտացած Գէյնցէի ուր լինելու մասին։ Սա նոյնպէս կալանաւորվեց և իրան անուանեց օբէր-լէյտենանտ Վենցէլ։ Ձերբակալվածները պահվում են հաւատավախտում։ Երկուսն էլ ժխտում են իրանց լրտես լինելը։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ։ Կէս գիշերին եկաւ առեստրի մինիստրը։ Այսօր մինիստրը ցուցահանդիսում դիտեց գիտական նկարչական և միւս պավիլիոնները։

ԵԼԻՍԱՎԷՏԳՐԱԴ։ Մինչև վերջին թէն այրվեց Բէկկօրօվայնի ցիրկը. մարդկանց հետ ձիարդութիւն չը պատահեց։

ՕՄՍԿ։ Երէկ երեկոյեան վերադարձին ժամանեց Մտօլիպինը։ Ճաց մօտ 3 ժամ, երկրորդ անգամ այցելից խօլերային բարակները, ընդունեց զեկուցումներ։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՕԴ։ Բացվեց գաւառական զէմստվոյի գիւղատնտեսական ցուցահանդէսը։

ՎՕՐՈՆԷԺ։ Գիտական Դումայի անդամ հանգուցեալ Ուբսուլի փոխարէն ընտրվեց ի. գ. խ. Նիկոլայ Իլիոդորովիչ Շիդլովսկին։

ՍԷՎԱՍՏՕՊՕԼ։ Ծովային մինիստրը մեկնեց Եալտա։

ՐԻԳԱ։ Իւրեվում բացվել է գիւղատնտեսական ցուցահանդէս։

ՔԻՇԻՆԷՎ։ Վախճանվեց Աֆանասի արքեպիսկոպոսը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱԳ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱԳ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՐԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Վճարը 50 կ.։ Զբաղողները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—95

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (երեխաների) / 5—7 ժ. երկ. (բնդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆոն № 38
(Ե.Հ.Կ.) 909. 100—15

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կուկիայի Նորաշէն սորը Աստուածածնի ԾԽԱԿԱՆ ԽԱՌՆ ԴՈՐՈՑԻ I, II և III բաժանմունքներում
կան ազատ տեղեր։
Հոգաբարձութիւն
1049. 1—1

Պետական միջնակարգ ուսումնարանի ուսուցչի ընտանիքում ընդունվում են
ԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
Հասցէն՝ Գանձակայա փողոց № 3, բնակարան 3.
(օ. մ.) 1022. 3—3

КРЕМЪ НЕЛЛИ
NELLY'S CREAM.
Англійская аристократія предпочитаетъ всѣмъ другимъ средствамъ именно „Кремъ Нелли", какъ лучшее для смягченія кожи лица, рукъ и бюста. Въ Лондонѣ расходится до 1.000.000 ban. ежегодно.
Кремъ Нелли уничтожаетъ всѣ недостатки кожи, загаръ, веснушки, пятна и т. п.
Продается у Мюръ и Мерилизъ, Гетлингъ. Акц. О-ва К. Эрманъ и К° и пр., а также во всѣхъ апт. и парфюмерн. магаз. Россіи.
Одной банки достаточно, чтобы убѣдиться въ его поразительномъ дѣйствіи.
Цѣна 1 р. 25 к. и 2 р. 25 к.
Въ провинцію налож. платежемъ на 50 к. дороже.
Для всей Россіи единств. складъ
МОСКВА, Причистенка, Б. Власьевскій пер., д. 3.
(М.130700) 423. 40—18

Ա. ՓՈՐՍՈՒՂԵԱՆ
ԹԻԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ
ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ
Ա. տարի . . 25 կ.
Բ. տարի . . 25 կ.
Գ. տարի . . 25 կ.
Գումարով առնողներին սովորական զիջումներ։ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ՝ ԹԻՖԼԻՍ, «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրախանութում։ Առանձին պայմաններով դիմել՝ Կարս, преподавателю реальнаго училища А. Порсугянц.
(գ. ե. ու.) 1042. 3—2

ՄԻ ՀՄՈՒՏ ԳՐԱԾԱՐ
որ միաժամանակ և ՏՊԱԳՐԻՉ է, ծանօթ տպարանական բոլոր գործերի հետ, օրինակ՝ պատուէր ընդունել և այլն, ցանկանում է պաշտօն ունենալ։ Հաճայն է գնալ և ուրիշ քաղաքներ։ Պայմանների մասին դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ, Метехскій подъемъ, д. № 18., кв. 5. А. М.-Акопову.
2 2

„Գուտտենբերգ" գրախանութում վաճառվում է
Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆԻ հետևեալ նոր աշխատութիւնը՝
Մի էջ հայկական ուսուցման պատմութիւնից, գինն է 60 կ.
Այնտեղ են վաճառվում նոյն հեղինակի և միւս աշխատութիւնները՝
Նոր Այբբենարան ուսուցիչ. համար 75 կ.
Նոյնը աշակերտների համար 15 կ.
Իրազնական դասեր 1 ր.
Начальн. русск. Хрестоматія для армянъ 1-я книжка 55 к.
Նոյնը 2-книжка 75 к.
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ".
(Ե. ու.) 981. 8—6

ԻՄ Կրօնի դասագրքեր ցանկացողները կարող են դիմել բոլոր հայ գրավաճառներին և ինձ (Бебутовская ул. 20)։ Զեղչը՝ ինչպէս յայտարարված է գրքերի կազմի վրա։
ՍԱՀԱԿ ա.-քահ. ՍԱՀԱԿԵԱՆՑ
(Ե. ու) 903. 10—9

Լոյս տեսաւ
ՋԵՌՆԱՐԿ
ԹԵԼԱԴՐՈՒԹԵԱՆ
(Ուղղագրական եւ բերական. վարժութիւններ)
ԳԻՆՆ Է 10 ԿՕՊԷԿ
Դիմել՝ Александрополь, учителю М. Тарахчіанъ, կամ՝ Թիֆլիսի գրավաճառներին։
(օ.մ.) 979. 10—7

2 ԶԳԵՍՏԱՅՈՒ 5 ր. 25 կ.
Ցարածելու նպատակով՝ 5 ր. 25 կոպէկով մենք ուղարկում ենք աշնանային կամ ձմերային 2 զգեստացու կտոր. 1) 4¼ արշ.ապամ. զգեստի համար ֆրանս. տրիկո, բրդից, շատ ամուր, գործնական և մոդային նկարներով. 2) 8 արշ. «Անգլէյ», կտոր կանացի զգեստի համար, միանգամայն մոդային և գեղեցիկ բրդէ կտոր։ Այդպիսի 2 կտոր ամենալաւ տեսակից՝ 6 ր. 25 կ.։ Ճանապարհածախքը 55 կ., Սիբիր՝ 1 ր. 15 կ.։ Երկու և աւելի զոյգ կտոր բերել տալուց՝ ճանապարհածախքը մեր հաշվին։ Ուղարկում ենք պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ. և երաշխաւորութեամբ։ Եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում։
Հասցէագրել. ЛОДЗЬ, № 43. Фабрика суконно-шерстяной мануфактуры.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(Ե.) (В. 55925) 994. 3—2



ՀԻՊՆՕՏԻԶՄ
ԴՈՒԻՔ ԿԱՐՈՂ ԷՔ ՀԻՊՆՕԶԱՅՆԵԼ
Հիպնօտիզմը բնական ձիրք չէ։ Ամեն ոք կարող է տիրապետել այս խորհրդաւոր գիտութեան։
Հիպնօտիզմ սովորելը նոյնքան հեշտ է, որքան ուտել խմելը։
Հիպնօտիզմը կը բժշկէ հիւանդութիւններ և կուղղէ մոլորութիւններն ու վատ բարքերը։
Հիպնօզական ցուցահանդէսները չափազանց զուարճալի են։
Սովորեցէք հիպնօզացնելու արուեստը։ Մշակեցէք ձեր մէջ ներշնչելու զօրութիւնը և այդ զանչիի ոյժի միջնորդութեամբ դարմանեցէք հիւանդութիւններ, տուէք ապշեցուցիչ ցուցահանդէսներ թատրոններում կամ մասնաւոր սրահներում և դառէք պրոֆէսիոնալ հիպնօտիստ։
Սովորելու ծախքը շատ չնչին է։
Ստացէք իմ «Ինչպէս հիպնօացնել» պատկերազարդ գրքոյկը, որը կը տայ ձեզ լիակատար բացատրութիւն հիպնօտիզմի, Մեսմերիզմի, Հոգեբուժութեան, Ներշնչման, Հոգնեռեսութեան և Ցելեպաթիի մասին։ Այս գրքոյկն ստանալու համար պիտի ուղարկել 10 կոպէկի նամակադրոշմ ճանապարհածախքի համար։
ԳՐԵՑԷՔ ԱՅՍՕՐ։ Գրեցէք ձեր անունն ու հասցէն որոշ։
Դիմել հետևեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago, Ill. U. S. A.
(Ե.Հ.) 689. 100—27

ՎԱՐՁԱՏՐՈՒԹԵԱՄԲ
Հրաւիրվում են ԵՐԳԻՉՆԵՐ և ԵՐԳՈՒՀԻՆԵՐ պատրաստվելիք քառաձայն երգեցիկ խառն խմբի համար, որ պէտք է հանդիսաւոր օրերին երգէ Թանդոյեան եկեղեցում։
Ձայները փորձելու համար և պայմանների մասին դիմել խմբապետ պ. Ա. Տէր-Յովսէփեանին—Յովհաննեան դպրոց, ամեն օր՝ ժամը 3½-ից մինչև 5-ը։
Երէցփոխ՝ Սիմէօն Գասպարեան
1034. 3—3
(ա. օ.)

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ
Թիֆլիս, Նարբերեժնայա, Վերայի կամուրջի մօտ, № 19.
Ի. ՖՕՆ-ԲՐԷՆՆԵՐԻ
Հեղինակ դասագրքի՝ ընդունված լուս. մինիստր. գիմնազիաների եւ Ֆիլիանս. մինիստր. ուսումն. բաժնից իբրեւ ձեռնարկ եւ դասագիրք բոլոր առեւտր. դպրոցներում։
Դասարաններս հիմնված են 1890 թ. և ուսումն. իշխան. տոմսից ճանաչված են օրինակելի։ Դասարաններն բռնում են երկու տեսակ անձերին, որոնք ցանկանում են ունենալ հաշուապահի, թղթակցի, գործակալի և այլ պաշտօն, յատկապէս առեւտր. գիտութիւններ։
Դասարաններում ուսանվում են հետեւեալ առարկաները. 1) ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ (հրկնակի, իտալական) եւ այլ տեսակի՝ բանկային, ֆաբրիկային, քաղ. եւ գեմստ. ինքնավար., գինու մենավաճառի, գործարանային, գիւղատնտեսական եւ այլն։ Դասաւանդութիւնը կատարվում է միանգամայն գործնական մէթոդով եւ սովորողս դասանց եւեթ ընդունում է ինքնուրոյնաբար վարել գրքերը։ 2) ԱՌԵՒՏՐ. ԹՒՐԱՔԱՆՈՒԹԻՒՆ.—Բանկային, ապրանքային, մուրհակային եւ այլ խնդիրների լուծումներ։ 3) ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ.—Ինքնուրոյն կազմումն առեւտր. նամակների հանդերձ հաշուապահ., առեւտրա-թւաբանական եւ վաճառ. գիտութիւններ։ 4) ԳԵՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ.—Վատ մանկների հանդերձ հաշուապահ., առեւտրա-թւաբանական եւ վաճառ. գիտութիւններ։ 5) ՕՐԵՆՍԴԻՏՈՒԹԻՒՆ.—Ծանօթացումն մուրհակային, ձեռագրի ուղղումն եւ բարգաւանման տաբերի ուսուցումն։ 6) ԳՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԺՄԻՆԳՏՈՆՈՎ.—Սովորողներին գերբօվային, արդիւնաբերական, կրէդիտային եւ այլ կոնոնների։ 7) ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹԻՒՆ.—Սովորողներ ծանօթանում են տեղ. հրապարակի վրա գտնվող յայտնի տեսակի ապրանքների քիմիական կազմուածքի եւ նոանց յատկութիւնը որոշելու հետ։ Այդ նպատակի համար կայ կաբինետ՝ անհրաժեշտ պրէպարատներով։ 8) ԳԻՇԵՐՕԹԻՒՆ ՀԱՇԻՐՀԻՆ ՁԻԼԲ.—Գործողութիւններ համրիչով։ Թւարան. եւ հանրանուագական խնդիրներ։ Գրաստ եւ ամերիկ. ձեւեր։ Բոլոր թւարան. գործող. եւ խնդիրներս ամբողջ դասընթացքի ժամանակ լուծվում են համրիչով։
Սովորողների ընդհանուր եւ մասնագիտ. կարգացման համար կայ ԴՐԱԳԱՐԱՆ դասաւանդվող առարկ. վերաբերեալ ամենալաւ դասագրքերով (մօտ 1000 գիրք)։ Գրքերը կարելի է եւ առնել ամեներ։ Դասարանների գարնանային ազատողները ձրիաբար կարող են օգտվել՝ գործնական հմտութիւն ձեռք բերելու համար՝ Ի. Ֆօն-Բրէնների առեւտրա-արդիւնաբեր. և տեխն. բիւրօյի գրասենեակում (Սերգիեվսկայա փ., № 4), որ, անպայման, օգտակար կը լինի գործնական տեսակէտից։
Դասարաններն ունեն 3 բաժանմունք. I բաժ. ընդունվում են զրագէտ անձեր, II-ում՝ յարաբերական կամ 3-դասեան դպրոցաւարտներ, իսկ III-ում՝ գործնական—հաշուապահ. և առեւտր. թւաբան. գիտցողներ։ Բարձրագոյնը բաժ. դասընթացքը տեւում է 5 ամիս։ Պարապմունքների սկիզբը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ից։ Խնդիրները եւ տեղեկ. ընդունվում են դասարանների գրասենեակում՝ Թիֆլիս. Նարբերեժնայա, Վերայի կամուրջի մօտ, սեփ. տ., № 19 կամ Սերգիեվսկայա փող, № 4. Դրասենեակը բաց է ամեն օր՝ առ. ժ. 9—1-ը եւ երեկ. ժ. 5—8-ը։ Տէլէֆոններ—929 եւ 1044.
(օ. մ.) 939. 20—10

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
Առեւտրական Գիտութիւնների Կուրսերում
Նոր մէթօդով սովորեցվում են
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ
ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հատուկ խմբերից երեկոյեան խմբեր։ Շաբաթական դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր՝ ժամը 10—12-ը և 4—7-ը։ Միխայլովսկի պր. № 24/4. Տէլէֆոն № 976.
(Ե.Հ.Հ.) 999. 0—5

Լոյս են տեսել և վաճառվում են
ԼԵՒՈՆ ԲԱԲԱՅԵԱՆԻ
(Ուսուցիչ ընդհ. աշխարհագրութեան Ներսիսեան դպրոցում)
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
(Կազմված ըստ գերմանական և ռուսական դասագրքերի)
ՄԱՍՆ Ա. Բնական աշխարհագրութիւն. Կովկաս և սահմանակից երկիրներ (Թիւրքահայաստան և Պարսկահայաստան), 4-րդ և մասամբ 3-րդ տարվայ դասընթաց, (Հայրենագիտութիւն և ընդհ. աշխարհագրութիւն)։ Բազմաթիւ մեծագիր պատկերներ, գինն է . . . 60 կոպ.
ՄԱՍՆ Բ. Քաղաքական աշխարհագրութիւն, Ասիա, Ամերիկա, Աֆրիկա և Աւստրալիա 5-րդ տարվայ դասընթաց, գինն է. . 65 կոպ
ՄԱՍՆ Գ. Քաղաքական աշխարհագրութիւն, Եւրոպա, 6 րդ տարվ. դասընթաց, գ. 50 կոպ
Հրատարակութիւն «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցի, Թիֆլիսում։
(Ե.Հ.Կ.) 982. 8—7

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Արշակ Զիլինկարեանի եւ Տիգրան Ռաֆամեանցի
ԴԱՍԸՆԿԵՐ Բ. ՏԱՐԻ
Մէջ ընդ մէջ կան ձեռագիր յօդուածներ աշխարհագրութեան եւ ուղղագրական որոշ կանոնների համար։
ԿԱԶՄԱՆ 60 ԿՕՊԷԿ
ԴԱՍԸՆԿԵՐ Ա. տարի (այբբենարան-ընթերցարան)
ԿԱԶՄԱՆ 50 ԿՕՊԷԿ
Պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում, Թիֆլիս. գումարով առնողներին զեղչ 20%, գրավաճառներին զեղչ 25%։
(Ե. շ.) 938. 8—7

Ժողովրդական Լուսաւորութեան Մինիստրութեան իրաւասութեան տակ.
Պետերբուրգի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Գեղարուեստական Ճեմարանի վկայագրով
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Саперная № 26.
Երկու սեռի անձերի համար
(Զորրորդ տարեշրջան)
Պարապմունքները սեպտեմբերի 16 ից մայիսի 15 ը ամեն օր՝ երեկ. ժ. 5—7-ը։
Էլեքտրական լուսաւորութիւն։
Աւանդելի առարկաներն են՝ նկարչութիւն, գծագրութիւն, գեղագրութիւն (հայ և օտար լեզուներով), ձեռարուեստ, փորագրութիւն, քանդակագործութիւն, շքեղ ձեռագործ, երկրաչափական ձեռագրութիւն, հեռանկար (պերսպեկտիվա), գոյներ և ստուերների տեսութիւն։
Աւարտողներին կը տրվի ատեստաց։
Կուրսերին կից կայ գեղարուեստական գրադարան։
Տարեկան վճարն է 40 ր., դպրոցականների համար 25 ր.։ Ցանկացողները թող բարեհաճեն յայտնել այդ մասին կուրսերի հիմնադրին, որից և կարելի է ստանալ աւելի մանրամասն տեղեկութիւններ. անձնական տեսակցութեան համար ամեն օր, առաւ. ժ. 9—11 ը։ Օտար քաղաքներից դիմել՝ Тифлисъ, почт. ящ. 133.
(Ե. ու. կ.) 1033. 5—3

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐԲՈՅ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առեւտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ բարեհաճեցաւ ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ ֆինանսների մինիստրութեան ուսումնարանական բաժնի կողմից առեւտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձեւով հաշուապահութիւն և ուրիշ ժամանակ. առարկաներ 4 ամսվայ ընթացքում։
Կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվում են սեպտեմբեր ամսից ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ և սղագրութիւն (стенографія) ըստ ցանկութեան և որոշ վճարում։
Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւաւեան։ Պարապմունքները սկսվելու են 1910 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։
Դասընթացքն աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատեստաստներ։
Դրանից անվախ բացված են քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր առեւտր եղբայր և թւաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում ենք դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիս. սեմ. Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, Телефонъ № 744.
Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիներ գիրքը ստանալու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կ.։
930. 0—11
(Կ.Ե.Հ.)

Տպարան „Экономія" Большая Ванкская № 3.